acba

ՔԱՐՏԵՐԻ

ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

AMERICAN EXPRESS VISA mastercard arca UnionPay 银联

ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Պայմաններում կիրառվող եզրույթները և սահմանումները

«Բանկ» - «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

«Պայմանագիր» - Քարտի դիմում-պայմանագիրը, «Քարտերի տրամադրման և սպասարկման պայմանները» (այսուհետ նաև՝ Պայմաններ) և «Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման սակագները» (այսուհետ նաև՝ Սակագներ) միասին:

«Քարտ» - Բանկի կողմից թողարկված ArCa Classic, ArCa Transfer, ArCa Credit, ArCa Farmer, ArCa «ՄԻՐ», ACBA Federation, ArCa կենսաթոշակային, ArCa հատուկ, Visa Electron, Visa Classic, Visa Student, Visa «Բարերար», Mastercard Standard, Mastercard UEFA Champions League, Visa Gold, Mastercard Gold, Mastercard World, Mastercard World Elite, Visa Signature, Visa Signature Limited Edition, UnionPay Gold, American Express Blue, American Express Cashback, American Express Gold, American Express Gold Debit, ինչպես նաև Visa Digital/Mastercard Digital First տեսակի քարտ:

«Հաշիվ» - Քարտային հաշիվ (ARCA կենսաթոշակային Քարտերի դեպքում՝ սոցիալական ապահովության հաշիվ, ArCa հատուկ Քարտերի դեպքում՝ հատուկ բանկային հաշիվ), որից հնարավոր է օգտվել Քարտի միջոցով:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1.1. Բանկի պաշտոնական կայքէջում տեղադրված Պայմանները և Սակագները հանդիսանում են Պայմանագրի կնքման հրապարակային առաջարկ (օֆերտա), իսկ Քարտապանը, ստորագրելով Քարտի դիմում-պայմանագիրը, ընդունում (ակցեպտավորում) է նշված հրապարակային առաջարկը (օֆերտան), և այդ պահից Պայմանագիրը համարվում է կնքված, բացառությամբ՝

- առաքման միջոցով ստացվող Քարտերի, որոնց դեպքում՝ Քարտապանը Պայմանագրի կնքման հրապարակային առաջարկը (օֆերտան) ընդունում է՝ ստորագրելով «Սուրհանդակային ծառայության միջոցով քարտի ստացական» փաստաթուղթը կամ ակտիվացնելով Քարտը, և այդ պահից Պայմանագիրը համարվում է կնքված, և
- Visa Digital/Mastercard Digital First Քարտերի, որոնց դեպքում՝ Բանկը Քարտապանին տեխնիկապես հնարավորություն է տալիս ակտիվացնել Visa Digital/Mastercard Digital First Քարտը, իսկ Քարտապանը Պայմանագրի կնքման հրապարակային առաջարկը (օֆերտան) ընդունում է Visa Digital/Mastercard Digital First Քարտը ակտիվացնելով, և ակտիվացման պահից՝ Պայմանագիրը համարվում է կնքված:

1.2. Պայմանագրով Բանկը պարտավորվում է Քարտապանի համար բացել Հաշիվ, Քարտապանին տրամադրել Քարտ (Visa Digital/Mastercard Digital First քարտերի դեպքում՝ Քարտապանի acba digital ինտերնետ բանկինգ

համակարգում արտացոլել Քարտը), ընդունել և Քարտապանի Հաշվին մուտքագրել մուտք եղող դրամական միջոցները, իսկ ArCa կենսաթոշակային Քարտերի դեպքում՝ բացառապես Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Նախարարություն) կողմից փոխանցվող ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 12-ի 284-Ն որոշմամբ և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով (այսուհետ՝ Որոշում) սահմանված պարբերական դրամական վճարները, և «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամից (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) հատուցման գումարների ստացման նպատակով Arca հատուկ Քարտերի դեպքում՝ բացառապես Հիմնադրամից փոխանցվող հատուցման գումարները, կատարել Հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և Հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ Քարտապանի կարգադրությունները, իսկ Քարտապանը պարտավորվում է վճարել Բանկին մատուցված ծառայությունների համար՝ Սակագների՝ տվյալ պահին գործող խմբագրությամբ սահմանված կարգով: Հաշվի տնօրինումը Բանկի կողմից կարող է սահմանափակվել, եթե սահմանափակումը նախատեսված է Սակագներով, և/կամ եթե սահմանափակումը բխում է Բանկի նկատմամբ կիրառելի իրավական կարգավորումներից/սահմանափակումներից, և/կամ եթե Բանկի գնահատմամբ սահմանափակումը անհրաժեշտ է նշված իրավական կարգավորումներից/սահմանափակումներից բխող Բանկի ռիսկերի զսպման նպատակով:

1.3. Visa Digital/Mastercard Digital First Քարտերի տվյալները Քարտապաններին տրամադրվում են acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով: Նշված Քարտերը ենթակա չեն վերաթողարկման կամ փոխարինման:

2. ՀԱՇՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հաշվով կարող են իրականացվել ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ գործառնություններ (ArCa կենսաթոշակային և ArCa հատուկ քարտերի դեպքում՝ միայն ելքային և հետվճարային գործառնություններ):

2.2. Հաշվով իրականացվող գործառնություններն են.

2.2.1. POS տերմինալի միջոցով վճարում,

2.2.2. Քարտի տվյալների ներկայացմամբ վճարում,

2.2.3. ինտերնետի միջոցով ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համար վճարում,

2.2.4. կանխիկ միջոցների ստացում բանկոմատներից, կանխիկի տրամադրման կետերից և Բանկի մասնաճյուղի տարածքում,

2.2.5. բանկոմատների և կանխիկի ընդունման կետերի միջոցով կանխիկ գումարի մուտքագրում Քարտին,

2.2.6. ՀՀ տարածքում առցանց հարթակների, acba digital ինտերնետ բանկինգ համակարգի և բանկոմատի միջոցով քարտից քարտ փոխանցում կամ վճարում,

2.2.7. էլեկտրոնային դրամապանակների միջոցով վճարում,

2.2.8. հետվճարային գործառնություններ՝ Հաշվով նախապես իրականացված գործառնության չեղարկում, սխալմամբ գանձված գումարի վերադարձ կամ մուտքային գործառնության ստացում, որի արդյունքում գործառնության գումարը՝ ամբողջական կամ մասնակի, վերադարձվում է Հաշվին կամ պարզապես կատարվում է Հաշվի կրեդիտավորում: Հետվճարը, կախված դրա իրականացման տեխնիկական իրագործման պարամետրերից, կարող է լինել մի քանի տեսակի՝ վերադարձ/փոխհատուցում (refund), չեղարկում (reversal) և կրեդիտագրում (payment):

2.2.9. օրենքով և Բանկի ներքին իրավական ակտերով չարգելված այլ գործառնություններ:

3. ՀԱՇՎՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Հաշվով գործառնություններն իրականացվում են Պայմանագրով և Քարտը սպասարկող վճարային համակարգի (Արմենիան Քարդ, Visa, Mastercard, UnionPay, American Express) կանոններով սահմանված կարգով:

3.1.1. Սոցիալական ապահովության հաշվով գործառնություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, Որոշմամբ, Բանկի և Նախարարության միջև կնքված Սոցիալական ապահովության հաշվի պայմանագրով, Պայմանագրով և Քարտը սպասարկող վճարային համակարգի՝ Արմենիան Քարդի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում: Հատուկ բանկային հաշվով գործառնություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հիմնադրամի և Բանկի միջև կնքված պայմանագրով, Պայմանագրով և Քարտը սպասարկող վճարային համակարգի՝ Արմենիան Քարդի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում:

3.2. Հաշվով գործառնություններն իրականացվում են Բանկի կողմից Քարտապանին տրամադրված (Visa Digital/Mastercard Digital First քարտերի դեպքում՝ Քարտապանի acba digital ինտերնետ բանկինգ համակարգում արտացոլված) Քարտով:

3.3. Քարտի վրա նշված են Քարտապանի անունը, ազգանունը, Բանկի անվանումը, վճարային համակարգի ապրանքանշանը, որին պատկանում է Քարտը, Քարտի համարը, Քարտի գործողության ժամկետը, Քարտի իսկությունը ստուգող կոդը, Քարտի արժույթը և այլն:

3.4. Քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը և պետք է հետ վերադարձվի Բանկ հետևյալ դեպքերում՝

3.4.1. Բանկի պահանջով,

3.4.2. Քարտի գործողության ժամկետը լրանալու դեպքում,

3.4.3. Քարտը վնասվելու դեպքում,

3.4.4. Պայմանագիրը լուծվելու դեպքում,

3.4.5. Պայմանագիրն անվավեր ճանաչվելու դեպքում:

3.5. Քարտի ՊԻՆ կոդը կարող է սահմանվել՝ Քարտը պատվիրելիս Քարտապանի կողմից ընտրված հետևյալ տարբերակներից որևէ մեկով.

3.5.1. Բանկի կողմից, որի դեպքում՝ Բանկը լռելյայն գեներացնում է քառանիշ ՊԻՆ կոդ, որը Քարտապանին տրամադրվում է թղթային եղանակով՝ փակ ծրարի մեջ,

3.5.2. Քարտապանի կողմից՝ հետևյալ տարբերակներով.

3.5.2.1. SMS հաղորդագրության միջոցով, որի դեպքում Քարտապանի՝ Բանկում գրանցված հիմնական հեռախոսահամարին ուղարկվում է մեկանգամյա օգտագործման վեցանիշ կոդ, որն օգտագործվում է բանկոմատի միջոցով նոր ՊԻՆ կոդի սահմանման համար:

3.5.2.2. acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով, որի դեպքում՝ Քարտապանը սահմանում է իր նախընտրելի քառանիշ ՊԻՆ կոդը: Ընդ որում՝ սահմանումից հետո առաջին գործարքը պետք է իրականացվի բանկոմատով՝ քարտի միկրոպրոցեսորի (չիպի) ընթերցմամբ՝ մուտքագրելով սահմանված ՊԻՆ կոդը:

3.6. Քարտի գործողության ընթացքում ՊԻՆ կոդը մոռանալու դեպքում՝ Քարտապանը կարող է սահմանել նոր ՊԻՆ կոդ՝ հետևյալ տարբերակներից որևէ մեկով.

3.6.1. լրացնելով համապատասխան դիմում Բանկի մասնաճյուղում կամ զանգահարելով Բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն և պատշաճ նույնականացվելով, որի դեպքում՝ Քարտապանի՝ Բանկում գրանցված հիմնական հեռախոսահամարին ուղարկվում է մեկանգամյա օգտագործման վեցանիշ կոդ, որն օգտագործվում է բանկոմատի միջոցով նոր ՊԻՆ կոդի սահմանման համար,

3.6.2. acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով, որի դեպքում՝ Քարտապանը սահմանում է իր նախընտրելի քառանիշ ՊԻՆ կոդը: Ընդ որում՝ սահմանումից հետո առաջին գործարքը պետք է իրականացվի բանկոմատով՝ քարտի միկրոպրոցեսորի (չիպի) ընթերցմամբ՝ մուտքագրելով սահմանված ՊԻՆ կոդը:

Պայմանների **3.6.1.** և **3.6.2.** կետերում նշված դեպքերում՝ Բանկն իրավունք ունի գանձել նշված ծառայության համար Բանկի Սակագներով սահմանված վճարը Հաշվում եղած միջոցներից, իսկ դրանց բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Քարտապանի այլ բանկային հաշիվներից:

3.7. Քարտապանի դիմումի հիման վրա Քարտապանին տրամադրվում է կից քարտ (միևնույն Հաշվին կցված նույն վճարային համակարգի և նույն տեսակի Քարտ՝ այլ անձի անունով), ինչպես նաև՝ լրացուցիչ քարտ (միևնույն Հաշվին կցված այլ վճարային համակարգի Քարտ՝ Քարտապանի անունով): Նշված քարտերով կատարված գործառնություններն իրականացվում են Պայմանագրով և Քարտը սպասարկող վճարային համակարգի կանոններով սահմանված կարգով, որոնց համար պատասխանատվություն է կրում Քարտապանը: (*Վերը նշված 3.4, 3.5 և 3.6 կետերը չեն վերաբերում Visa Digital/Mastercard Digital First տեսակի քարտերին, իսկ միայն 3.6 կետը՝ նաև Visa Signature Limited Edition, Acba Federation, ArCa կենսաթոշակային և ArCa հատուկ քարտերին)*

3.8. Բանկը սահմանափակում է Քարտով մեկ օրվա ընթացքում կանխիկի ստացման գործառնությունների քանակը և առավելագույն գումարը, մեկ օրվա ընթացքում վճարային գործառնությունների առավելագույն գումարը, արտարժութային քարտերի դեպքում՝ նաև քարտից քարտ փոխանցումների ստացման առավելագույն գումարը, իսկ կից քարտերի դեպքում կարող է սահմանափակել նաև մեկ ամսվա ընթացքում կանխիկի ստացման ու վճարային գործառնությունների առավելագույն գումարը, որոնք կարող են Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված չափով փոփոխվել՝ հիմնական Քարտապանի կողմից Բանկ դիմելու, Բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսա-

յին կենտրոն զանգահարելու և պատշաճ նույնականացվելու կամ acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով: Ընդ որում, կից քարտերի ամսական սահմանաչափերը և արտարժութային քարտերի դեպքում՝ քարտից քարտ փոխանցումների ստացման առավելագույն գումարի սահմանաչափը կարող են փոփոխվել բացառապես հիմնական Քարտապանի կողմից Բանկ այցելելու դեպքում: Քարտապանի կողմից Բանկ զանգահարելու միջոցով սույն կետում նշված մեկ օրվա ընթացքում կանխիկի ստացման գործառնությունների առավելագույն սահմանաչափերը փոփոխելու համար դիմելու դեպքում՝ Բանկն իրավունք ունի գանձել նշված ծառայության համար Բանկի Սակագներով սահմանված վճարը Հաշվում եղած միջոցներից, իսկ դրանց բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Քարտապանի այլ բանկային հաշիվներից:

3.9. Հաշվին մուտքագրված *(ArCa կենսաթոշակային և ArCa հատուկ քարտերի դեպքում՝ փոխանցված)* դրամական միջոցները հասանելի կլինեն ամենաուշը սկսած հաջորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ից:

3.10. Ոչ աշխատանքային ժամերին կանխիկ գումարի մուտքագրման հնարավորություն տվող սարքավորումնե-րով Հաշվին մուտքագրված դրամական միջոցները ձևակերպվում են Հաշվին կանխիկ գումարի մուտքագրման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում *(Սույն կետը չի վերաբերում ArCa կենսաթոշակային և ArCa հատուկ քարտատեսակներին)*:

3.11. Քարտապանի դիմումի համաձայն Քարտի գործողության դադարեցման, Քարտի կորստի, վնասման,

ՊԻՆ կոդը մոռանալու կամ այլ դեպքերում Հաշվին առկա սեփական միջոցների վճարումը կատարվում է Բանկի դրամարկղից կամ այլ բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով՝ Սակագների համաձայն:

3.12. Պայմանների **2.2.** կետով սահմանված գործառնությունները Բանկի կողմից ձևակերպվում են «Արմենիան Քարդ» ՓԲԸ պրոցեսինգային կենտրոնի (այսուհետ՝ Պրոցեսինգային կենտրոն) կողմից այդ գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը Բանկ ուղարկելուց հետո առավելագույնը չորս աշխատանքային օրվա ընթացքում:

3.13. Քարտապանի բջջային հեռախոսահամարի կիրառման միջոցով Քարտապանի կողմից ստացվող դրամական միջոցները մուտքագրվում են Բանկի կողմից միակողմանիորեն որոշված Քարտապանին պատկանող որևէ քարտի, որը Քարտապանի կողմից ցանկացած ժամանակ կարող է փոփոխվել acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով: *(Սույն կետը չի վերաբերում ArCa կենսաթոշակային և ArCa հատուկ քարտերին)*:

3.14. Բանկն իրավունք ունի առանց Քարտապանի համաձայնության ուղղել քարտային հաշվով գործառնություններ իրականացնելիս իր կողմից թույլ տրված, այդ թվում՝ ծրագրային սխալները:

4. ԹՈՔԵՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Բանկի կողմից թողարկված Visa, Mastercard և American Express վճարային համակարգերի Քարտերով գործառնությունները հնարավոր է իրականացնել նաև դրանց թվային համարժեքների (այսուհետ՝ Թոքեն) միջոցով:

4.2. Թոքենների ստեղծումը հնարավոր է իրականացնել «Apple Wallet» և/կամ «Google Wallet» դրամապանակների միջոցով:

4.3. Թոքեններով վճարման և կանխիկացման գործառնություններ հնարավոր է կատարել համապատասխանաբար այն առևտրի/սպասարկման կետերում և բանկոմատներում, որոնք սպասարկում են առանց հպման Քարտեր:

4.4. Թոքեններով կատարված գործառնությունները հավասարազոր են Քարտով կատարված գործառնություններին:

4.5. Թոքենների ստեղծման գործընթացում Քարտապանի Քարտի տվյալների անվտանգությունը երաշխավորված է Visa, Mastercard և American Express վճարային համակարգերի կողմից:

4.6. Բջջային հեռախոսը կորցնելու դեպքում Թոքենի բլոկավորման նպատակով անհրաժեշտ է անհապաղ կապ հաստատել Բանկի հետ:

4.7. Բոլոր այն դեպքերում, երբ Քարտը բլոկավորվում է այնպիսի պատճառով, որը չի սահմանափակում Քարտային հաշվին առկա միջոցների օգտագործման հնարավորությունը, ապա գործում են հետևյալ պայմանները.

4.7.1. բլոկավորված Քարտի համար հնարավոր է ստեղծել նոր Թոքեն,

4.7.2. բլոկավորված Քարտին նախկինում կցված Թոքենները չեն բլոկավորվում,

4.7.3. բլոկավորված Քարտին կցված Թոքեններով հնարավոր է իրականացնել գործառնություններ:

5. ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1. Հաշվի սպասարկման պայմանները, այդ թվում՝ Հաշվի բացման, Քարտի տրամադրման/ակտիվացման, Հաշվի սպասարկման և Քարտի փոխարինման միջնորդավճարների չափերը, Հաշվին առկա դրամական միջոցների նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույքի չափը, կից/լրացուցիչ քարտերի սպասարկման պայմանները և այլ պայմաններ սահմանվում են Սակագներով, եթե Բանկի և Քարտապանի միջև այլ համաձայնություն չի կայացվել: ArCa կենսաթոշակային քարտերի դեպքում՝ սոցիալական ապահովության հաշվով գործառնություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, Որոշմամբ, Բանկի և Նախարարության միջև կնքված Սոցիալական ապահովության հաշվի պայմանագրով, Պայմանագրով և Քարտը սպասարկող վճարային համակարգի՝ Արմենիան Քարդի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում: ArCa հատուկ քարտերի դեպքում՝ Հատուկ բանկային հաշվով գործառնություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հիմնադրամի և Բանկի միջև կնքված պայմանագրով, Պայմանագրով և Քարտը սպասարկող վճարային համակարգի՝ Արմենիան Քարդի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում: Նախքան Բանկի համապատասխան ծառայությունից

օգտվելը Քարտապանը պարտավոր է ծանոթանալ Սակագներին, որոնք հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում՝ www.acba.am, և տեղադրված են մասնաճյուղերի հաճախորդների սպասարկման սրահներում:

5.2. Բանկի կողմից իրականացվող գործառնությունների Սակագները, առանց Քարտապանի հետ համաձայնեցվելու, կարող են միակողմանիորեն փոփոխվել:

5.3. Յուրաքանչյուր գործառնություն կատարելիս և Բանկի համապատասխան ծառայությունից օգտվելիս Բանկն իր ծառայությունների համար վճարներն իրավունք ունի գանձել Հաշվում եղած միջոցներից, իսկ դրանց բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Քարտապանի այլ բանկային հաշիվներից:

5.3.1. Քարտապանի՝ Բանկի կողմից իր acba digital ինտերնետ բանկինգ համակարգի և առցանց տիրույթի միջոցով առաջարկվող ապահովագրական պրոդուկտներից օգտվելու դեպքում՝ Բանկն իրավունք ունի յուրաքանչյուր դեպքում, նախքան ապահովագրության պայմանագրի ժամկետի ավարտը, անակնկալ կարգով գանձել ապահովագրավճարների գումարները և փոխանցել ապահովագրական ընկերությանը՝ Հաշվում եղած միջոցներից, իսկ դրանց բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Քարտապանի այլ բանկային հաշիվներից:

5.4. Հաշվի սպասարկման միջնորդավճարը սահմանվում է Սակագներով: Այն Քարտերի դեպքում, որոնց կցված չէ վարկային գիծ, Քարտապանը Քարտի ստացման օրը պետք է իր Հաշվին վճարի Քարտի առաջին տարվա կամ

ամսվա սպասարկման միջնորդավճարը: Այն Քարտերի դեպքում, որոնց կցված է վարկային գիծ, Քարտի առաջին տարվա կամ ամսվա սպասարկման միջնորդավճարը գանձվում է վարկային գծի ակտիվացման օրը՝ վարկային գծի միջոցների հաշվին, իսկ վերջինիս անբավարարության դեպքում սպասարկման միջնորդավճարի գումարը ձևակերպվում է որպես գերածախս: Հաջորդ ամիսների կամ տարիների սպասարկման միջնորդավճարները գանձվում են յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը (եթե Քարտի համար սահմանված է ամսական սպասարկման միջնորդավճար), կամ Քարտի պատվիրման կամ քարտային հաշվի բացման կամ Քարտի տրամադրման ամսվան հաջորդող յուրաքանչյուր 13-րդ ամսվա առաջին աշխատանքային օրը (եթե Քարտի համար սահմանված է տարեկան սպասարկման միջնորդավճար): Visa Digital/Mastercard Digital First Քարտերի դեպքում՝ Քարտապանը Քարտի ակտիվացման օրը պետք է իր Հաշվին վճարի Քարտի առաջին տարվա սպասարկման միջնորդավճարը: Հաջորդ տարիների սպասարկման միջնորդավճարները գանձվում են Քարտի ակտիվացման ամսվան հաջորդող յուրաքանչյուր 13-րդ ամսվա առաջին աշխատանքային օրը: Ընդ որում, եթե Քարտի գործողության ժամկետը դադարեցվում է սահմանված ժամկետից շուտ, ապա նախապես վճարված Հաշվի սպասարկման միջնորդավճարը ենթակա չէ վերադարձման: Հաշվի սպասարկման միջնորդավճարը ենթակա է ամբողջական չափով վճարման՝ անկախ Քարտի տրամադրման/Հաշվի բացման օրվանից:

5.5. Քարտապանի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա Քարտի գործողության ժամանակավորապես կասեցումը (բլոկավորումը) չի դադարեցնում Քարտի գործողությունը, ինչպես նաև Հաշվի սպասարկման միջնորդավճարի գանձումը:

5.6. Քարտապանի կողմից Քարտի գործողության դադարեցման համար Բանկ գրավոր կամ բանավոր դիմելուց անմիջապես հետո Բանկն իրականացնում է Քարտի բլոկավորում, իսկ Քարտը և/կամ Հաշիվը փակվում են Քարտապանի գրավոր դիմումի հիման վրա Քարտով նախկինում կատարված բոլոր գործառնությունները Հաշվով ձևակերպելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ պայմանով, որ Հաշվի մնացորդը բավարարում է Քարտով կատարված գործառնությունները ձևակերպելու և դրանց համար Սակագներով նախատեսված միջնորդավճարները գանձելու համար: Քարտի փակումը հնարավոր է իրականացնել միայն բոլոր դրամային պարտավորությունները (Հաշվի սպասարկման միջնորդավճարը, գերածախսի և դրա տոկոսների նկատմամբ հաշվարկված տուժանքը, գերածախսի տոկոսները, գերածախսի գումարը, վարկային գծի գումարի և տոկոսների նկատմամբ հաշվարկված տուժանքը, ժամկետանց տոկոսները, ժամկետանց վարկային գծի գումարը, տոկոսները և վարկային գծի գումարը) կատարելուց հետո:

5.7. Բանկը Սակագներով սահմանված չափով Քարտի գործողության ընթացքում Հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկում և վճարում է տոկոսագումարներ: Ընդ որում, տոկոսագումարների հաշվարկը կատարվում է օրական՝ սկսած Հաշվին դրամական միջոցների մուտքագրման օրվան հաջորդող օրվանից:

5.8. Յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված տոկոսագումարները վճարվում են Հաշվին՝ այդ ամսվա վերջին աշխատանքային օրը: Տոկոսագումարի հաշվարկը դադարեցվում է Քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-ին (տասնչորսին), իսկ եթե այդ օրը ոչ աշխատանքային է՝ հաջորդող առաջին աշխատանքային օրը, ընդ որում, առ տվյալ օրը կուտակված տոկոսագումարները վճարվում են Հաշվին:

5.9. Եթե Քարտապանի Հաշվի արժույթը տարբեր է ՀՀ դրամից, ապա հաշվարկված տոկոսագումարները վճարվում են Քարտապանի ՀՀ դրամային ընթացիկ հաշվին, իսկ արտարժույթի առքն ու վաճառքը կատարվում է տվյալ օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արժութային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքով:

5.10. Եթե Քարտապանի Հաշվի արժույթը տարբեր է ՀՀ դրամից և Քարտապանը Քարտի գործողության ժամկետի ընթացքում դիմում է Բանկ Քարտի գործողության դադարեցման նպատակով, և առկա է Քարտի դրական մնացորդի դիմաց կուտակված տոկոսագումար, ապա այն վճարվում է Քարտապանի ՀՀ դրամային ընթացիկ հաշվին, իսկ արտարժույթի առքն ու վաճառքը կատարվում է նախորդ օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արժութային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքով:

5.11. Արտարժութային քարտերի սպասարկման դեպքում Քարտապանի անունով բացվում է ՀՀ դրամային ընթացիկ հաշիվ:

5.12. ArCa կենսաթոշակային քարտերի դեպքում՝ Հաշվում առկա Դրամական միջոցները, անակցեպտ կարգով և առանց Քարտապանի լրացուցիչ համաձայնության, կարող են Բանկի կողմից փոխանցվել Նախարարությանը՝ վերջինիս կողմից Բանկին համապատասխան կարգադրություն ներկայացնելու դեպքում:

5.13. ArCa հատուկ քարտերի դեպքում՝ Հիմնադրամի կողմից Հաշվին փոխանցված դրամական միջոցները, անակցեպտ կարգով և առանց Քարտապանի լրացուցիչ համաձայնության, կարող են Բանկի կողմից փոխանցվել Հիմնադրամին՝ վերջինիս կողմից Բանկին համապատասխան կարգադրություն ներկայացնելու դեպքում:

5.14. Հղումով փոխանցում (LinkPay) ծառայության միջոցով կատարված գործարքների, քարտից քարտ կատարված գործարքների և հաշվին կատարված այլ մուտքերի գծով զեղծարարության, դրա կասկածի և/կամ կատարված գործարքների բողոքարկման ստացման դեպքում Հաշվին տվյալ ծառայության միջոցով մուտքագրված դրամական միջոցների տնօրինումը Բանկի կողմից կարող է սահմանափակվել և/կամ դրանք կարող են անակցեպտ գանձվել Հաշվից, իսկ դրանում միջոցների անբավարարության դեպքում՝ Քարտապանի այլ հաշիվներից, այդ թվում՝ ավանդային: Ընդ որում, անակցեպտ գանձումը կատարվում է Հաշվի արժույթով հաշիվներից, իսկ դրանցում միջոցների անբավարարության դեպքում՝ այլ արժույթով հաշիվներից՝ կատարելով արտարժույթի փոխարկում տվյալ օրվա համար Բանկի սահմանած փոխարժեքով: Քարտապանի՝ Բանկում առկա բոլոր հաշիվներին գումարի անբավարարության դեպքում Բանկը կարող է պահանջել Քարտապանից տասնօրյա ժամկետում Բանկին վճարել հղումով փոխանցում (LinkPay) ծառայության միջոցով ստացված դրամական միջոցները:

5.15. Բանկն իրավունք ունի վերաթողարկել Քարտը (բացառությամբ՝ Arca Credit, Arca Farmer, Visa Digital/Mastercard Digital First Քարտերի, Visa Student Քարտի դեպքում, եթե լրացել է հաճախորդի 30 տարեկանը)՝ հիմք ընդունելով Քարտով կատարված Գործառնությունների ծավալը, Քարտի սպասարկման միջնորդավճարի վճարումները, Քարտային հաշվին առկա միջոցները, ժամկետանց օրերի քանակը: Ընդ որում, Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո Բանկի կողմից վերաթողարկված Քարտը 6 (վեց) ամիսների ընթացքում չստանալու դեպքում Քարտը ոչնչացվում է (բացառությամբ՝ Arca հատուկ տեսակի քարտերի), իսկ Քարտապանի կողմից օգտագործված վարկային գծի մարումն իրականացվում է Բանկի և Քարտապանի միջև կնքված Պայմանագրի համաձայն:

5.16. Քարտի վերաթողարկման/փոխարինման դեպքում՝ վերաթողարկված/փոխարինված Քարտի նկատմամբ կիրառելի են վերաթողարկման/փոխարինման պահին գործող Պայմաններն ու Սակագները:

6. ԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԿՈՒՄԸ

6.1. Հաշվի արժույթով կատարված գործառնության դեպքում գործառնության գումարը գանձվում է Հաշվից՝ առանց փոխարկման, գործառնության նույն արժույթով: Քարտապանը Քարտով կարող է իրականացնել նաև գործառնություններ՝ Հաշվի արժույթից տարբերվող արժույթով՝ օրենքով և Պայմանագրով սահմանված պայմաններով և կարգով:

6.2. **Գործառնության կատարման պահին** գործառնության գումարը փոխարկվում է Հաշվի արժույթի՝ հիմք ընդունելով գործառնության կատարման պահին Քարտը սպասարկող վճարային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքը և/կամ ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արժութային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքը՝ առքի կամ վաճառքի համար համապատասխանաբար նվազեցնելով կամ ավելացնելով Պրոցեսինգային կենտրոնի կողմից սահմանված տոկոսադրույքը:

6.3. **Գործառնության մշակման պահին** գործառնության գումարը փոխարկվում է Հաշվի արժույթի հետևյալ կարգով.

6.3.1. Պրոցեսինգային կենտրոնի միջոցով քարտերի սպասարկումն իրականացնող բանկերի սպասարկման ցանցում գործառնություններ իրականացնելիս, ինչպես նաև այլ բանկերի սպասարկման ցանցում Visa

և Mastercard վճարային համակարգի քարտերով ԱՄՆ դոլարով և եվրո արժույթով, իսկ American Express և UnionPay վճարային համակարգերի քարտերով ԱՄՆ դոլարով գործառնություններ իրականացնելիս, գործառնությունների գումարը անհրաժեշտության դեպքում փոխարկվում է Հաշվի արժույթի սույն պայմանների **6.3.7.** կետում սահմանված կարգով:

6.3.2. Այլ բանկերի սպասարկման ցանցում Visa վճարային համակարգի քարտերով ԱՄՆ դոլարից և եվրո արժույթից տարբեր արժույթներով կատարված գործառնությունների գումարը Visa վճարային համակարգի կողմից փոխարկվում է ԱՄՆ դոլարի գործառնության կատարման պահին Visa վճարային համակարգի կողմից սահմանված փոխարժեքով և, անհրաժեշտության դեպքում, փոխարկվում է Հաշվի արժույթի Պայմանների **6.3.7.** կետում սահմանված կարգով: Գործառնության գումարը ԱՄՆ դոլարի փոխարկելու համար գանձվում է միջնորդավճար՝ գործառնության գումարի 2 (երկու) տոկոսի չափով, բացառությամբ հետվճարի չեղարկում (reversal) տեսակի, որի դեպքում գործառնության գումարի դիմաց նախկինում գանձված համապատասխան միջնորդավճարը վերադարձվում է Հաշվին:

6.3.3. Այլ բանկերի սպասարկման ցանցում Mastercard վճարային համակարգի քարտերով ԱՄՆ դոլարից և եվրո արժույթից տարբեր արժույթով կատարված գործառնությունների գումարը Mastercard վճարային համակարգի կողմից փոխարկվում է ԱՄՆ դոլարի գործառնության կատարման պահին Mastercard վճարային համակարգի կողմից սահմանված փոխարժեքով և, անհրաժեշտության դեպքում, փոխարկվում է Հաշվի

արժույթի Պայմանների **6.3.7.** կետում սահմանված կարգով: Գործառնության (բացառությամբ հետվճարների) գումարը ԱՄՆ դոլարի փոխարկելու համար գանձվում է միջնորդավճար՝ գործառնության գումարի 2 (երկու) տոկոսի չափով:

6.3.4. Այլ բանկերի սպասարկման ցանցում UnionPay վճարային համակարգի քարտերով ԱՄՆ դոլարից տարբեր արժույթով կատարված գործառնությունների գումարը UnionPay վճարային համակարգի կողմից փոխարկվում է ԱՄՆ դոլարի գործառնության կատարման պահին UnionPay վճարային համակարգի կողմից սահմանված փոխարժեքով և, անհրաժեշտության դեպքում, փոխարկվում է Հաշվի արժույթի Պայմանների **6.3.7.** կետում սահմանված կարգով: Գործառնության գումարը ԱՄՆ դոլարի փոխարկելու համար գանձվում է միջնորդավճար՝ գործառնության գումարի 2 (երկու) տոկոսի չափով, բացառությամբ հետվճարի, որի դեպքում գործառնության գումարի դիմաց նախկինում գանձված համապատասխան միջնորդավճարը վերադարձվում է Հաշվին:

6.3.5. Այլ բանկերի սպասարկման ցանցում American Express վճարային համակարգի քարտերով ԱՄՆ դոլարից տարբեր արժույթով կատարված Գործառնությունների գումարը American Express վճարային համակարգի կողմից փոխարկվում է ԱՄՆ դոլարի՝ կատարման պահին American Express վճարային համակարգի կողմից սահմանված փոխարժեքով և, անհրաժեշտության դեպքում, փոխարկվում է Հաշվի արժույթի՝ Պայմանների **6.3.7.** կետում սահմանված կարգով: Եթե վճարման Գործառնության արժույթը տարբեր է Քարտի արժույթից, ապա American Express վճարային համակարգը գանձում է միջնորդավճար՝ Գործառնության գումարի 1 (մեկ) տոկոսի

չափով: Գործառնության հետվճարի դեպքում՝ Գործառնության գումարը ԱՄՆ դոլարի փոխարկելու համար՝ Պայմանների սույն կետի համաձայն գանձված միջնորդավճարը վերադարձվում է Հաշվին:

6.3.6. Գործառնության գումարը, Պայմանների **6.3.2., 6.3.3., 6.3.4.** և **6.3.5.** կետերի համաձայն, ԱՄՆ դոլարի փոխարկելու համար գանձված միջնորդավճարը ենթակա չէ վերադարձման, բացառությամբ՝ նշված կետերով ուղղակիորեն սահմանված դեպքերի:

6.3.7. Պայմանների **6.3.1., 6.3.2., 6.3.3., 6.3.4.** և **6.3.5.** կետերով նկարագրված դեպքերում փոխարկումը Հաշվի արժույթի ՀՀ դրամային արժույթով քարտերի դեպքում կատարվում է գործառնությունը Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող օրվա դրությամբ Բանկի կողմից քարտային գործառնությունների ձևակերպման համար սահմանված վերջին փոխարժեքով: ԱՄՆ դոլար կամ եվրո արժույթով քարտերի դեպքում փոխարկումը կատարվում է տարանցիկ փոխարժեքով, որը հաշվարկվում է գործառնությունը Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արժութային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքի միջոցով: Քարտապանի Հաշվին ձևակերպվում է գործառնության մշակման արդյունքում փոխարկված և հաշվարկված գումարը:

6.4. Գործառնության կատարման և գործառնության մշակման օրերին կիրառվող արտարժույթի փոխարժեքի և փոխարկման կարգի տարբերության հետևանքով Հաշվով ձևակերպված գործառնության գումարը տարբերվում է գործառնության կատարման պահին Քարտից գանձված գումարից:

6.5. Արտարժութային քարտերի համար Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարները գանձվում են ձևակերպման պահին ՀՀ ԿԲ կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքով:

6.6. ՀՀ տարածքում բանկոմատների միջոցով իրականացվող քարտից քարտ փոխանցումները կատարվում են ՀՀ դրամ արժույթով՝ անկախ Հաշվի արժույթից: Ընդ որում՝ ՀՀ դրամ արժույթից տարբեր արժույթով Քարտերով կատարված քարտից քարտ փոխանցումները և/կամ ՀՀ դրամ արժույթից տարբեր արժույթով Քարտերին ստացված քարտից քարտ փոխանցումների գումարները փոխարկվում են Հաշվի արժույթի՝ համաձայն Պայմանների **6.2.** և **6.3.** կետերի:

6.7. Բանկի Քարտերին այլ բանկերի սպասարկման ցանցից ստացվող մուտքային գործառնությունների դեպքում՝ Բանկը, Պայմանների **6.3.7.** կետում նկարագրված կարգով, իրականացնում է Գործառնության գումարի փոխարկում՝ այդ Գործառնության համար կիրառված արժույթից Հաշվի արժույթի:

7. ՀԱՇՎԻՎԸ ՎԱՐԿԱՎՈՐԵԼԸ

7.1. Այն դեպքերում, երբ Բանկը վճարում է Հաշվից, չնայած դրանում դրամական միջոցների բացակայությանը կամ անբավարարությանը (գերածախս), Բանկը նման վճար կատարելու օրվանից համարվում է Քարտապանին համապատասխան գումարով վարկ տրամադրած:

7.2. Քարտապանին կարող է տրամադրվել ժամանակավոր օվերդրաֆտ՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և պայմաններով: Ընդ որում, ժամանակավոր օվերդրաֆտի հնարավորությունը տրամադրվում է առավելագույնը 14 (տասնչորս) օրացուցային օրով և ենթակա է մարման ժամանակավոր օվերդրաֆտի տրամադրումից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում:

7.3. Գերածախսը պարտավորություն է, որն առաջանում է Քարտով գործառնություն կատարելու արդյունքում՝ հանգեցնելով Քարտի մնացորդի գերազանցմանը:

7.4. Գերածախս կարող է առաջանալ, օրինակ, հետևյալ դեպքերում՝

7.4.1. եթե գործառնության կատարման համար Բանկից չի պահանջվել հավաստագրում (գործառնության կատարման իրավասության ստուգում), և գործառնության գումարը գերազանցել է Հաշվի մնացորդը,

7.4.2. Քարտով կատարված գործառնության դիմաց Սակագներով սահմանված գանձման ենթակա միջնորդավճարի գումարը գերազանցել է Հաշվի մնացորդը,

7.4.3. Քարտապանը օգտագործել է Բանկի կողմից տրամադրված ժամանակավոր օվերդրաֆտը և սահմանված ժամկետում չի մարել այն,

7.4.4. եթե Քարտին ստացված կրեդիտային գործարքը ավելի ուշ է ձևակերպվել Հաշվին, քան Քարտապանի կողմից այդ կրեդիտային գործարքի գումարի օգտագործման գործարքը, և գործառնության գումարը գերազանցել է Հաշվի մնացորդը,

7.4.5. Հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործառնության կատարման և տվյալ գործառնության մշակման օրերին կիրառվող արտարժույթի փոխարժեքի տարբերության հաշվին,

7.4.6. եթե համապատասխան վճարային համակարգի կողմից սահմանված ժամկետներում գործարքի առաջին ներկայացումը չստանալու հետևանքով Քարտին վերականգնված գործարքի գումարը կամ տեխնիկական այլ պատճառներով Քարտին սխալմամբ մուտքագրված գումարը օգտագործվում է Քարտապանի կողմից,

7.4.7. Բանկի անհասանելի լինելու դեպքում Բանկի կողմից նախապես սահմանված արժեքների սահմաններում վճարային համակարգի կողմից գործարքի հավաստագրման արդյունքում գործառնության գումարը գերազանցել է Քարտի մնացորդը,

7.4.8. եթե Քարտով կատարված գործառնությունը Բանկում չի ձևակերպվել, և Հաշվին առկա մնացորդը կամ դրա մի մասը արգելադրվել/բռնագանձվել է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից,

7.4.9. եթե ոչ աշխատանքային ժամերին և օրերին Քարտին մուտքագրվող միջոցների ակտիվացումից հետո Քարտապանն ամբողջությամբ կամ մասամբ օգտագործել է դրանք և այդ գործառնությունները Բանկում դեռ չեն ձևակերպվել, իսկ ձևակերպման պահին գանձման ենթակա միջնորդավճարները և/կամ կուտակված տոկոսագումարը գերազանցել են Հաշվի մնացորդը,

7.4.10. եթե մինչև Քարտով կատարված գործառնությունների Բանկում ձևակերպվելը Հաշվին առկա մնացորդը կամ դրա մի մասը Քարտապանի կողմից կամ իր հանձնարարականի հիման վրա ելքագրվել է Հաշվից, և գործառնությունների ձևակերպման պահին գործառնությունների գումարը գերազանցել է Հաշվի մնացորդը,

7.4.11. եթե, մինչև Հաշվով կատարված գործառնությունների Պրոցեսինգային կենտրոնում ձևակերպվելը, Հաշվին առկա մնացորդը կամ դրա մի մասը Քարտապանի կողմից կամ իր հանձնարարականի հիման վրա կրկին ելքագրվել է Հաշվից։

7.5. Հաշվի գերածախսի ձևակերպման օրվանից կատարվում է Սակագներով սահմանված չափի տոկոսագումարների հաշվարկ՝ օրական կտրվածքով։

7.6. Քարտապանը պարտավոր է Բանկի առաջին իսկ պահանջով կամ մինչև Քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-րդ օրը, իսկ եթե այդ օրը ոչ աշխատանքային է՝ հաջորդող առաջին աշխատանքային

օրը մարել Հաշվին առաջացած գերածախսի գումարը, դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարը և Հաշվի սպասարկման միջնորդավճարը:

7.7. Եթե Քարտապանը Բանկի հանդեպ ունի մինչև տվյալ գործառնական օրվա ավարտը կատարման ենթակա Պայմանագրից բխող դրամային պարտավորություն, գործառնական օրվա ավարտից հետո Բանկն իրավունք է ստանում գանձել պարտքի (այդ թվում՝ տուժանքի, տոկոսների, գերածախսի, վարկի, սպասարկման միջնորդավճարի) գումարը Քարտապանի՝ Բանկում ունեցած բոլոր բանկային հաշիվներից՝ բանկային հաշիվներում դրամական միջոցների առկայության դեպքում՝ վեց ամսվա ընթացքում, իսկ բանկային հաշիվներում դրամական միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ դրամական միջոցների յուրաքանչյուր մուտքագրումից հետո վեց ամսվա ընթացքում:

7.8. Առաջացած գերածախսի, իսկ առկայության դեպքում վարկի գումարը գանձվում է Հաշվի արժույթով հաշիվներից, իսկ տուժանքը, տոկոսները՝ ՀՀ դրամով հաշիվներից: Եթե համապատասխան հաշիվներում բացակայում է անհրաժեշտ գումարը, այն գանձվում է Քարտապանի այլ բանկային հաշիվներից: Այդ պարագայում արտարժույթի առքն ու վաճառքը առաջացած գերածախսի, իսկ առկայության դեպքում վարկի գումարի գանձման դեպքում կատարվում է տվյալ օրվա համար Բանկի սահմանած փոխարժեքով, իսկ տուժանքի, տոկոսների և սպասարկման միջնորդավճարի գանձման դեպքում՝ նախորդ օրվա համար ՀՀ ԿԲ կողմից սահմանած միջին շուկայական փոխարժեքով:

8. ԱՌԱՆՑ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՔԱՐՏԱՊԱՆԻ ՔԱՐՏԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ ՓՈԽԱՆՑԵԼԸ

(Սույն բաժինը չի վերաբերում ArCa կենսաթոշակային և ArCa հատուկ քարտերին)

8.1. Քարտապանի անունով ստացված առանց հաշվի բացման դրամական միջոցները կարող են Քարտապանի կողմից տրված վճարման հանձնարարականի հիման վրա փոխանցվել Քարտապանի Հաշվին:

8.2. Քարտապանը վճարման հանձնարարականը ներկայացնում է Բանկ հեռախոսազանգի միջոցով՝ Բանկի պատասխանատու աշխատակցին հայտնելով իր անունը, ազգանունը, Քարտի համարը, Քարտի գաղտնաբառը և փոխանցման նույնականացման համարը:

8.3. Բանկի պատասխանատու աշխատակիցը իրավունք ունի հեռախոսազանգի պատկանելության հավաստիության ապահովման և դրանում տեղ գտած սխալների բացահայտման նպատակով Քարտապանից հարցնել լրացուցիչ տեղեկատվություն՝ փոխանցողի անունը, ազգանունը, գումարի չափը և այլն:

8.4. Հեռախոսազանգը պետք է կատարվի Բանկի **(+374 10) 31 88 88** հեռախոսահամարին:

8.5. Բանկը պարտավորվում է մինչև հեռախոսազանգը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը դրամական միջոցներն ուղղել Քարտապանի Հաշվին:

8.6. Բանկը պարտավորվում է չկատարել վճարման հանձնարարականը, եթե Քարտապանի կողմից ներկայացվել է սխալ նույնականացման համար, կամ, եթե վճարման հանձնարարականը չի համապատասխանում Պայմանների **8.2., 8.3.** և **8.4.** կետերի պահանջներին:

8.7. Այն դեպքում, երբ փոխանցված գումարի արժույթն այլ է, քան Քարտապանի Հաշվի արժույթը՝ դրամական միջոցները Քարտապանի հեռախոսազանգի ընդունման պահին Բանկի կողմից սահմանված փոխարժեքով փոխարկվում և փոխանցվում է Քարտապանի հաշվեհամարին:

9. ՔԱՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

9.1. Երրորդ անձանց կողմից Քարտի անօրինական օգտագործումից խուսափելու նպատակով Քարտապանը պարտավորվում է խստորեն պահպանել հետևյալ կանոնները.

9.1.1. ապահովել Քարտի տվյալների և ՊԻՆ-կոդի (Visa Digital/Mastercard Digital First քարտերի դեպքում, եթե այդպիսի կոդ առկա է) գաղտնիությունը, ինչի համար խորհուրդ է տրվում ոչնչացնել ՊԻՆ-կոդը պարունակող ստացականը (առկայության դեպքում), ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները Քարտի տվյալների և/կամ ՊԻՆ-կոդի անհասանելիությունն այլ անձանցից կամ նկարահանող սարքերից ապահովելու համար, չգրել ՊԻՆ-կոդը Քարտի վրա, հեռախոսի ու համակարգչի մեջ և չպահել այն Քարտի հետ միասին կամ երրորդ անձանց համար այլ հասանելի վայրում, Քարտը և ՊԻՆ-կոդը չտրամադրել այլ անձանց, այդ թվում՝ Բանկի աշխատակիցներին,

9.1.2. ապահովել Բանկում գրանցված գաղտնաբառի գաղտնիությունը,

9.1.3. ապահովել Բանկում գրանցված էլեկտրոնային հասցեի գաղտնաբառի գաղտնիությունը,

9.1.4. ապահովել Քարտի իսկությունը ստուգող կոդի գաղտնիությունը,

9.1.5. ապահովել իրեն ուղարկված 3D Secure անվտանգության կոդի գաղտնիությունը,

9.1.6. Քարտով գործառնություն իրականացնելիս ուշադիր զննել կտրոնում նշված գումարի ճշտությունը և որից հետո միայն ստորագրել այն,

9.1.7. ինտերնետում վճարում կատարելիս օգտվել միայն այն կայքերից, որոնց հասցեները սկսվում են **«https»** հապավումով կամ ունեն **«Secure Sockets Layer (SSL)»** կրիպտոգրաֆիկ արարողակարգ:

9.2. Քարտի կամ Քարտի տվյալների կորստի, գողության կամ Քարտով զեղծարարության փորձի/զեղծարար գործառնության կատարման դեպքում, Քարտապանը պարտավորվում է.

9.2.1. acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով իրականացնել Քարտի բլոկավորում կամ Քարտը բլոկավորելու համար անհապաղ ներկայանալ Բանկի մոտակա մասնաճյուղ Քարտի բլոկավորման դիմում ներկայացնելու համար կամ զանգահարել **(+374 10) 31 88 99** կամ **(+374 10) 31 88 88** կամ **(+374 10) 59 22 22** հեռախոսահամարներին,

9.2.2. Քարտի փոխարինման կամ փակման համար Քարտը բլոկավորելուց հետո դիմել Բանկ,

9.2.3. Քարտը վերադարձնել Բանկ՝ առկայության դեպքում:

9.3. Բանկն իրավունք ունի առանց Քարտապանին տեղեկացնելու բլոկավորել Քարտապանի Քարտը՝ զեղծարար գործարքների իրականացման վտանգի, զեղծարարության կասկածի դեպքերում: Քարտը կարող է ապաբլոկավորվել միայն զեղծարարության կասկածի վերացման և այն դեպքում, եթե Քարտապանը բանավոր

կամ գրավոր հաստատում է տվյալ գործարքների իր կողմից կատարված լինելը, բացառությամբ այն դեպքերի, եթե առկա է անձամբ Քարտապանի կողմից և/կամ վերջինիս իմացությամբ/մասնակցությամբ զեղծարար գործարքների կատարման կասկած և/կամ վտանգ:

9.4. Քարտապանի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա Բանկը կարող է տեղեկացնել Քարտապանին Քարտով գործառնությունների (ներառյալ այն գործառնությունների, երբ կատարվել է գործարքի բողոքարկում, հետվճար կամ այլ այնպիսի գործարք, որի արդյունքում գործարքի գումարը հետ է վերադարձվել Հաշվին) վերաբերյալ Բանկում գրանցված հիմնական բջջային հեռախոսահամարին SMS հաղորդագրություններ ուղարկելու միջոցով, որի դիմաց Բանկը Քարտապանի Հաշվից գանձում է Բանկի Սակագներով սահմանված միջնորդավճարը: Հաշվին անհրաժեշտ միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում միջնորդավճարը գանձվում է չօգտագործված վարկային գծի (առկայության դեպքում) գումարից: Չօգտագործված վարկային գծի բացակայության կամ անբավարարության դեպքում միջնորդավճարի գումարը հաշվառվում է որպես գերածախս:

9.5. SMS հաղորդագրությունները Քարտապանին ուղարկվում են Քարտապանի կողմից ընտրված գումարային շեմից բարձր գումարի գործարքների համար: Ընդ որում՝ Բանկի կողմից Սակագներով սահմանված միջնորդավճարներ կամ այլ գանձումներ իրականացնելիս կիրառվում է Բանկի կողմից սահմանված միասնական նվազագույն

շեմը, որը դրամային քարտերի դեպքում սահմանված է 200 ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար արժույթով քարտերի դեպքում՝ 1 ԱՄՆ դոլար և եվրո արժույթով քարտերի դեպքում՝ 1 եվրո:

9.6. Այն դեպքում, երբ Քարտապանին տեղեկացվում է կատարված գործարքի գումարը Հաշվին հետ վերադարձվելու (ապասառեցնելու) մասին կամ Բանկի կողմից նախահաստատված մերժման կոդերով մերժված գործարքների համար SMS հաղորդագրությունների ուղարկման դեպքում Քարտապանի կողմից ընտրված նվազագույն շեմը չի կիրառվում:

9.7. Քարտապանը պարտավորվում է չձևափոխել և չվնասել Քարտը: *(Սույն կետը չի վերաբերում Visa Digital/ Mastercard Digital First քարտերին)*:

10. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

10.1. Քարտապանը լրիվ ֆինանսական պատասխանատվություն է կրում.

10.1.1. Քարտի կորստի, Քարտի կամ Քարտի տվյալների գողության դեպքում կամ Քարտով զեղծարարության փորձի/ հաստատված զեղծարար գործառնության կատարումից հետո Քարտով կատարված Գործառնությունների համար մինչև Բանկին Քարտի կորստի, Քարտի կամ Քարտի տվյալների գողության մասին հայտնելը, բացառությամբ հավաստագրում (Գործառնության կատարման իրավասության ստուգում) չպահանջող գործարքների, որոնց համար մինչև Քարտի գործողության ժամկետի ավարտը լրիվ ֆինանսական պատասխանատվությունը կրում է Քարտապանը, եթե Քարտի տվյալների գողության կամ Քարտով զեղծարարության փորձի/զեղծարար գործառնության կատարման մասին Բանկ հայտնելու ժամանակ Քարտը Բանկ հետ չի վերադարձվում Քարտապանի կողմից,

10.1.2. Քարտապանի կողմից Քարտի գործողության դադարեցման դիմումի ներկայացման պահին Քարտը Բանկ հետ չվերադարձնելու դեպքում, Քարտի գործողության դադարեցումից հետո մինչև Քարտի գործողության ժամկետի ավարտը Քարտով կատարված հավաստագրում (Գործառնության կատարման իրավասության ստուգում) չպահանջող գործարքների համար,

10.1.3. Քարտով զեղծարարության փորձի/զեղծարար գործառնության կատարման դեպքում՝ նշված փորձից կամ զեղծարար գործառնությունից հետո տվյալ Քարտով կատարված գործառնությունների համար, եթե Քարտապանը չի տեղեկացրել Բանկին տվյալ Քարտի բլոկավորման վերաբերյալ կամ հրաժարվել է տվյալ Քարտի բլոկավորումից,

10.1.4. Քարտի գործողության ընթացքում Քարտով կատարված հավաստագրում (գործառնության կատարման իրավասության ստուգում) չպահանջող գործարքների համար,

10.1.5. Քարտի գործողության ընթացքում Բանկի անհասանելի լինելու դեպքում վճարային համակարգի կողմից հավաստագրված գործարքների համար՝ Բանկի կողմից վճարային համակարգի հետ նախապես համաձայնեցված արժեքների սահմաններում,

10.1.6. Քարտով ՊԻՆ-կոդի միջոցով իրականացված բոլոր գործառնությունների համար, բացառությամբ Քարտի գործողության դադարեցման նպատակով Բանկ դիմելուց և Քարտը Բանկ հետ վերադարձնելուց հետո հավաստագրում (գործառնության կատարման իրավասության ստուգում) չպահանջող գործարքների,

10.1.7. Հաշվին կցված Կից Քարտ(եր)ով կատարված գործառնությունների համար,

10.1.8. Թոքենով իրականացված բոլոր գործառնությունների համար:

10.2. Բանկը պատասխանատվություն չի կրում.

10.2.1. ուշացված, սխալ կամ չիրականացված գործառնությունների համար, որոնք առաջացել են առևտրի և սպասարկման կետերի կամ Վճարային համակարգի մեղքով կամ տեխնիկական պատճառներով, որոնք Բանկի ողջամիտ հսկողությունից դուրս են եղել,

10.2.2. Բանկին չպատկանող միջոցներով իրականացված կանխիկացման կամ վճարման գործառնությունների ձախողման համար, եթե Բանկը ձախողման մեջ չի ունեցել մեղավորություն,

10.2.3. Քարտի կամ Քարտի տվյալների միջոցով իրականացված անօրինական գործառնությունների համար, եթե դա Բանկի կողմից Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանք չի հանդիսացել,

10.2.4. միկրոպրոցեսորային (չիպային) քարտով ՊԻՆ կոդի միջոցով իրականացված գործառնությունների համար, եթե դա Բանկի կողմից Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանք չի հանդիսացել,

10.2.5. անհպում տեխնոլոգիայով իրականացված գործարքների համար, որոնք կատարվել են տվյալ վճարային համակարգի կանոններով ՊԻՆ կոդի մուտքագրում չպահանջող առավելագույն թույլատրելի սահմանաչափի շրջանակում, (Սույն ենթակետը չի վերաբերում Visa Digital/Mastercard Digital First քարտերին),

10.2.6. ինտերնետի միջոցով իրականացված գործառնությունների համար, եթե դա Բանկի կողմից Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանք չի հանդիսացել,

10.2.7. այն գործառնությունների համար, որոնք կատարվել են Պայմանագրում սահմանված անվտանգության կանոնների խախտմամբ,

10.2.8. մուտքային գործառնությունների համար կիրառված արժույթի համար, եթե այն տարբերվում է սպասարկման կետի կողմից Քարտապանին տրամադրված փաստաթղթերում նշված արժույթից, որը սակայն իրականացվել է սպասարկման կետի կողմից սահմանված կարգով և պայմաններով,

10.2.9. Քարտապանի ու առևտրի և սպասարկման կետերի միջև առաջացած վեճերի համար,

10.2.10. Հաշվի, ՊԻՆ կոդի, Քարտի համարի, գաղտնաբառի և Քարտի վերաբերյալ այլ տեղեկատվությունը Բանկից անկախ պատճառներով երրորդ անձանց հայտնի դառնալու համար,

10.2.11. ՀՀ և արտասահմանյան բանկերի քարտերին կատարված քարտից քարտ փոխանցումների համար, եթե փոխանցման ժամանակ քարտապանի կողմից մուտքագրվող քարտի համարը կամ հեռախոսահամարը (հեռախոսահամարով փոխանցումների դեպքում) նշվել է սխալ,

10.2.12. կեղծ հեռախոսազանգի հիման վրա Քարտը բլոկավորելու արդյունքում հասցված վնասների համար,

10.2.13. Քարտով կատարված գործառնությունների վերաբերյալ Քարտապանի բջջային հեռախոսի համարին

SMS հաղորդագրության տեսքով ուղարկված տեղեկատվության՝երրորդ անձանց հայտնի դառնալու համար, ինչպես նաև Քարտապանի բջջային հեռախոսի կամ բջջային կապի ծառայություններ մատուցող կազմակերպության տեխնիկական խափանումների հետևանքով Քարտով կատարված գործառնությունների վերաբերյալ Քարտապանի բջջային հեռախոսահամարին Բանկի կողմից ուղարկված SMS հաղորդագրությունը Քարտապանի կողմից չստանալու կամ սխալ բովանդակությամբ ստանալու համար:

10.3. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն բլոկավորել Քարտը՝ Քարտով տրամադրված վարկի կամ Բանկում այլ վարկերի գծով ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում՝ մինչև ժամկետանց պարտավորությունների մարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը, ինչպես նաև Պայմանագրով սահմանված կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

10.4. Բանկն իրավունք ունի Քարտապանի անձնական տվյալները և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրել պետական, այդ թվում՝ դատական և իրավապահ մարմիններին՝ իր իրավունքներն իրացնելու և պարտավորությունները կատարելու նպատակով, և միայն այն անձին ում անունով բացված է Հաշիվը:

10.5. Պայմանների **7.6.** կետով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Բանկն իրավունք ունի չմարված գերածախսի գումարի և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարի նկատմամբ հաշվարկել տուժանք, որը ենթակա է վճարման Քարտապանի կողմից: Տուժանքի չափը

սահմանվում է Բանկի կողմից միակողմանիորեն, որը չի կարող գերազանցել յուրաքանչյուր օրվա համար 0.13 (զրո ամբողջ տասներեք հարյուրերորդական) տոկոսը:

10.6. Պայմանների **7.6.** կետով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Քարտապանի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով կտրամադրվի ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրին և ԱՔՌԱ վարկային բյուրոյին:

11. ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11.1. Յուրաքանչյուր ամիս Բանկը Քարտապանին տեղեկացնում է նախորդ ամսվա ընթացքում Քարտով կատարված գործառնությունների վերաբերյալ՝ տրամադրելով նրան Հաշվից քաղվածք։

11.2. Քաղվածքի տրամադրման եղանակը ընտրվում է Քարտապանի կողմից։

12. ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Եթե Քարտապանի կողմից բողոքարկվող գործարքը կանխիկի ստացման գործարք է, ապա այն ենթակա է Բանկի կողմից բավարարման միայն այն դեպքում, եթե տվյալ բանկոմատը կամ կանխիկի տրամադրման կետը սպասարկող բանկն ընդունում է կանխիկ գումարի չտրամադրման փաստը:

12.2. Եթե Քարտապանի կողմից բողոքարկվող գործարքը վճարման, ինտերնետի միջոցով իրականացված վճարման կամ Քարտի տվյալների ներկայացմամբ վճարման գործարք է, ապա այն ենթակա է Բանկի կողմից բավարարման, եթե Վճարային համակարգի կանոններով նախատեսված բողոքարկման գործընթացի շրջանակում Բանկը հետ է ստանում բողոքարկվող գործառնության գումարը սպասարկող բանկից:

12.3. Եթե Քարտապանի կողմից գործառնությունը բողոքարկվում է տվյալ գործառնությունը իր կամ իր լիազորված անձի կողմից կատարված չլինելու կամ Քարտով զեղծարարության կատարման պատճառով, ապա այն ենթակա է Բանկի կողմից բողոքարկման, միայն այն դեպքում, եթե Քարտապանը կատարել է Պայմանների **9.2.1.** կետով պահանջվող գործողությունները:

12.4. Եթե Բանկը Քարտը սպասարկող վճարային համակարգի կանոններով նախատեսված բողոքարկման գործընթացի շրջանակում որոշում է կայացնում չշարունակել բողոքարկման գործընթացը, սակայն Քարտապանը

ցանկանում է դիմել բողոքարկման գործընթացի վերջին փուլին՝ տվյալ Վճարային համակարգի արբիտրաժային կոմիտեին, ապա արբիտրաժային կոմիտեին դիմելու համար սահմանված միջնորդավճարները, ինչպես նաև Վճարային համակարգի կողմից հօգուտ մյուս կողմի որոշում կայացնելու դեպքում Բանկի կրած ծախսերը փոխհատուցվում են Քարտապանի կողմից:

12.5. «Արմենիան Քարդ» վճարային համակարգի անդամ բանկերի սպասարկման ցանցում կատարված գործառնության բողոքարկման դեպքում բողոքարկվող գործարքի գումարը մուտքագրվում է քարտապանի հաշվին Բանկում գործարքի ձևակերպման օրը: Ընդ որում՝ քարտային հաշվին Բանկի կողմից բողոքարկվող գումարի մուտքագրումից հետո, սպասարկող բանկը կարող է մերժել բողոքարկումը՝ վճարային համակարգի կանոններով սահմանված կարգով, որի դեպքում Բանկում գործարքի ձևակերպման օրը Բանկն առանց Քարտապանի կողմից լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու բողոքարկվող գործարքի գումարը անակցեպտ կարգով գանձում է Քարտապանի համապատասխան հաշվից:

12.6. Քարտապանն իրավունք ունի բողոքարկել իր Քարտով կատարված գործառնությունը վերջինիս կատարման օրվանից 55 (հիսունհինգ) օրացուցային օրվա ընթացքում: Ընդ որում, Բանկն իրավունք ունի մերժել Քարտապանի կողմից ներկայացված բողոքարկման հայտի հիման վրա բողոքարկման գործընթաց նախաձեռնելը, եթե, Բանկի հիմնավոր կարծիքով, նման գործընթաց նախաձեռնելը հնարավոր չէ և/կամ ներկայացված հայտը բողոքարկման ենթակա չէ:

12.7. Բանկը դիմումի ներկայացման օրվանից առավելագույնը 90 (իննսուն) օրացուցային օրվա ընթացքում Քարտապանին ներկայացնում է հիմնավոր պատասխան:

12.8. ՀՀ և արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերին կատարված քարտից քարտ փոխանցումները բողոքարկման ենթակա չեն:

13. AMERICAN EXPRESS ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՐՏԱՏԵՐԱԿՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13.1. Բանկն իրավունք ունի՝

13.1.1. առանց Քարտապանի նախնական համաձայնության՝ փոխանցել Պայմաններից բխող իր իրավունքներն ու պարտավորությունները American Express վճարային համակարգի կազմում ներառված կամ վերջինիս կողմից մատնանշված որևէ երրորդ անձի և Պայմաններից բխող իր իրավունքների և պարտավորությունների փոխանցում իրականացնելու համար վերջիններիս տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն,

13.1.2. ցանկացած պահին American Express վճարային համակարգի պահանջով կամ իր պահանջով դադարեցնել Քարտապանի հետ կնքված Պայմանագրի գործողությունը,

13.1.3. տրամադրել Պայմանների շրջանակում իրեն հայտնի դարձած բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները American Express վճարային համակարգին կամ վերջինիս կազմում ներառված և/կամ վերջինիս հետ համագործակցող և/կամ վերջինիս կողմից մատնանշված որևէ այլ իրավաբանական անձի:

13.2. Քարտապանը հավաստիացնում է, որ

13.2.1. ծանոթ է Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից 12.01.2015 թվականին հաստատված և Պայմանագրի կնքման պահին գործող eFO 72-16-33#5 «American Express Gold և American Express Gold Debit Քարտի տրամադրման, սպասարկման և ծառայություններից օգտվելու պայմաններ», Բանկի American Express Gold և American Express Gold Debit Քարտերին կից տրամադրվող՝Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից 17.06.2013 թվականին հաստատված և Պայմանագրի կնքման պահին գործող eFO 72-00-502#5 «American Express Gold և American Express Gold Debit Քարտատերերին տրամադրվող ապահովագրական ծառայությունների ընդհանուր պայմաններ», Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից 15.10.2015 թվականին հաստատված և Պայմանագրի կնքման պահին գործող eFO 72-00-504#5 «American Express Blue Քարտատերերին տրամադրվող ապահովագրական ծառայությունների ընդհանուր պայմաններ» փաստաթղթերին, որոնք կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը, և համաձայն է դրանցում նշված պայմաններին (հրապարակվում են նաև նաև **www.americanexpress.am** կայքում),

13.2.2. ծանոթ է ու համաձայն է, որ American Express Gold և American Express Gold Debit Քարտերի հետ տրամադրվող ծառայությունները, որոնք նկարագրված են Պայմանների 13-րդ գլխում, չեն գործելու American Express Gold և American Express Gold Debit Քարտերին կցված լրացուցիչ Mastercard Gold քարտով կատարվող գործարքների դեպքում:

13.3. Cashback ծրագրի կանոնները

13.3.1. Cashback (American Express Cashback Քարտով կատարված վճարային գործառնությունների գումարի որոշակի տոկոսի վերադարձ Հաշվին) ծրագիրը (այսուհետ սույն ենթաբաժնում՝ Ծրագիր) նախատեսում է American Express Cashback Քարտով Հայաստանում կատարված բոլոր վճարային գործառնությունների 1%-ի (մեկ տոկոս) չափով վճարում Քարտապանի Հաշվին, որից կգանձվի և ՀՀ պետական բյուջե կվճարվի եկամտահարկ՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

13.3.2. ՀՀ-ում գործող մի շարք սուպերմարկետներում վճարումներ կատարելու դեպքում Ծրագրի շրջանակում American Express Cashback Քարտապանի Հաշվին կվճարվի Գործառնությունների գումարի 2%-ը (երկու տոկոս), որից կգանձվի և ՀՀ պետական բյուջե կվճարվի եկամտահարկ՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

13.3.3. Ծրագրին անդամակցումը կատարվում է ավտոմատ կերպով American Express Cashback Քարտի ձեռքբերման հետ մեկտեղ և չի ենթադրում որևէ լրացուցիչ անդամավճար կամ այլ տեսակի վճարներ:

13.3.4. Կանխիկացման գործառնությունների, բանկային հաշիվների միջև փոխանցումների, քարտից քարտ փոխանցումների, կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, Բանկին տրամադրված պարբերական վճարման հանձնարարականով կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, ՀՀ տարածքից դուրս

կատարված վճարային գործառնությունների (ներառյալ ՀՀ առևտրային բանկերի կողմից չսպասարկվող կայքերում կատարված օնլայն վճարումների), ինչպես նաև ՀՀ տարածքում գրանցված էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարվող գործարքների և բջջային օպերատորների գրասենյակներում վճարումների դեպքում Cashback չի կիրառվում:

13.3.5. Ծրագրի շրջանակում վճարման ենթակա գումարը Հաշվին վճարվում է American Express Cashback Քարտի պատվիրման օրվանից յուրաքանչյուր տասներկու ամիսը մեկ՝ տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրը:

13.3.6. American Express Cashback Քարտը որպես Լրացուցիչ Քարտ տրամադրելու դեպքում Ծրագրի շրջանակներում վճարման ենթակա գումարը Հաշվին վճարվում է Քարտի պատվիրման օրվանից յուրաքանչյուր տասներկու ամիսը մեկ՝ տասներկուերորդ ամսվա վերջին բանկային օրը, իսկ վերջին տարվա վճարման ենթակա գումարը, ինչպես նաև Լրացուցիչ Քարտը 1 (մեկ) տարուց պակաս գործողության ժամկետով տրամադրելու դեպքում վճարման ենթակա գումարը Հաշվին վճարվում է հիմնական քարտի գործողության ժամկետի վերջին ամսվա վերջին բանկային օրը:

13.3.7. Ծրագիրը գործում է American Express Cashback Քարտի ակտիվացման պահից, մինչ վերջինիս գործողության ժամկետի ավարտը:

13.3.8. Քարտապանի կողմից American Express Cashback Քարտը գործողության ժամկետից շուտ փակելու դեպքում Ծրագրի շրջանակում կուտակված և դեռևս չվճարված գումարները զրոյացվում են և ենթակա չեն վճարման American Express Cashback Քարտապանի Հաշվին:

13.4. Membership Rewards ծրագրի կանոնները

13.4.1. Membership Rewards ծրագիրը (այսուհետ սույն ենթաբաժնում՝ Ծրագիր) նախատեսում է American Express Blue/Gold/Gold Debit Քարտով Հայաստանի Հանրապետությունում, իսկ American Express Gold և American Express Gold Debit քարտերի դեպքում՝ նաև արտերկրում կատարած բոլոր վճարային գործառնությունների դիմաց (American Express Gold և American Express Gold Debit քարտերի դեպքում՝ նաև կանխիկացման գործառնությունների դիմաց) միավորների կուտակում, որոնք հետագայում փոխարինվում են Բանկի կողմից առաջարկվող պարգևատրումներով, և գործում է American Express Gold,American Express Gold Debit և American Express Blue քարտերի համար՝ ստորև ներկայացված կարգով.

13.4.2. American Express Gold և American Express Gold Debit քարտեր

13.4.2.1. Ծրագրին անդամակցումը կարող է իրականացվել 2 եղանակով.

- Քարտի պատվիրման պահին՝ Քարտի դիմում-պայմանագրում համապատասխան նշում կատարելու միջոցով,
- Քարտի ստացումից հետո ցանկացած ժամանակ՝ այցելելով Բանկի որևէ մասնաճյուղ և լրացնելով Membership Rewards ծրագրին անդամակցման դիմումը:

13.4.2.2. Քարտապանի անդամակցումը Ծրագրին կատարվում է 1 (մեկ) տարի ժամկետով, բայց ոչ ավել, քան Քարտի գործողության ժամկետն է: Ծրագրին Քարտապանի մասնակցության ժամկետը լրանալու դեպքում այն ավտոմատ երկարաձգվում է ևս 1 (մեկ) տարով, սակայն ոչ ավել, քան Քարտի գործողության ժամկետն է, եթե նախապես Քարտապանը Բանկին չի տեղեկացրել Ծրագրում իր մասնակցությունը դադարեցնելու վերաբերյալ: Ծրագրին Քարտապանի մասնակցության ավտոմատ երկարաձգման ժամանակ Քարտապանի Հաշվից գանձվում է Բանկի Սակագներով սահմանված Ծրագրին մասնակցության անդամավճարը:

13.4.2.3. Քարտապանն իրավունք ունի ցանկացած ժամանակ դադարեցնել Ծրագրին իր մասնակցությունը՝ լրացնելով համապատասխան դիմում:

13.4.2.4. ԱՄՆ դոլար և եվրո արժույթներով Քարտերի՝ Ծրագրին անդամակցման դեպքում Բանկի Սակագներով սահմանված Ծրագրին մասնակցության անդամավճարը գանձվում է անդամակցման օրվա դրությամբ Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

13.4.2.5. Քարտի փոխարինման պարագայում Քարտապանի նոր Քարտից Ծրագրին անդամակցության վճար չի գանձվում, եթե նախկին Քարտից գանձված անդամակցության տարեկան վճարի ժամանակահատվածը դեռ չի ավարտվել: Նոր Քարտից գանձումը կատարվում է նախկին Քարտից անդամակցության վճարի գանձման օրվանից մեկ օրացուցային տարի հետո՝ որպես անդամակցության հերթական տարեկան վճար:

13.4.2.6. Քարտից քարտ փոխանցումների, բանկային հաշիվների միջև փոխանցումների, կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, Բանկին տրամադրված պարբերական վճարման հանձնարարականով կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, ինչպես նաև ՀՀ տարածքում գրանցված էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարվող գործարքների և բջջային օպերատորների գրասենյակներում վճարումների դեպքում Membership Rewards միավորներ (այսուհետ՝ Միավորներ) չեն կուտակվում:

13.4.2.7. Հայաստանում և արտերկրում կատարված յուրաքանչյուր 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ վճարային գործառնության և 1 000 ՀՀ դրամ կանխիկացման գործառնության դիմաց Քարտապանը ստանում է 1 (մեկ) Միավոր:

13.4.2.8. Կից Քարտերի միջոցով առևտրի և սպասարկման կետերում անկանխիկ վճարումների և կանխիկացման գործառնությունների դիմաց վաստակած Միավորներն ավելանում են Քարտապանի՝ հիմնական Քարտի միջոցով վաստակած ընդհանուր Միավորներին և ենթակա են տնօրինման հիմնական Քարտապանի կողմից:

13.4.3. American Express Blue քարտեր

13.4.3.1. Ծրագրին անդամակցումը կատարվում է ավտոմատ կերպով Քարտի ձեռքբերման հետ մեկտեղ և չի ենթադրում որևէ լրացուցիչ անդամավճար կամ այլ տեսակի վճարներ:

13.4.3.2. Ծրագիրը գործում է Քարտի ակտիվացման պահից, մինչ վերջինիս գործողության ժամկետի ավարտը:

13.4.3.3. Կանխիկացման գործառնությունների, բանկային հաշիվների միջև փոխանցումների, քարտից քարտ փոխանցումների, կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, Բանկին տրամադրված պարբերական վճարման հանձնարարականով կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, ՀՀ տարածքից դուրս կատարված վճարային գործառնությունների (ներառյալ ՀՀ առևտրային բանկերի կողմից չսպասարկվող կայքերում կատարված վճարումների), ինչպես նաև ՀՀ տարածքում գրանցված էլեկտրոնային

դրամապանակների միջոցով կատարվող գործարքների և բջջային օպերատորների գրասենյակներում վճարումների դեպքում Membership Rewards միավորներ (այսուհետ՝ Միավորներ) չեն կուտակվում:

13.4.3.4. Յուրաքանչյուր 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ վճարային գործառնության դիմաց Քարտապանը ստանում է 1 (մեկ) Միավոր:

13.4.3.5. Կից Քարտերի միջոցով առևտրի և սպասարկման կետերում անկանխիկ վճարումների դիմաց վաստակած Միավորներն ավելանում են Քարտապանի՝ Հիմնական Քարտի միջոցով վաստակած ընդհանուր Միավորներին և ենթակա են տնօրինման Հիմնական Քարտապանի կողմից:

13.4.4. Քարտապանի կողմից կատարված ցանկացած Գործառնություն ամբողջությամբ կամ մասնակիորեն բողոքարկելու հետևանքով Գործառնության գումարի հետ վերադարձման դեպքում Քարտապանի կողմից՝ Պայմաններով սահմանված կարգով տվյալ Գործառնության դիմաց կուտակած Միավորները կամ դրանց համապատասխան մասը նույնպես չեղյալ են համարվում:

13.4.5. Բանկը պարբերաբար կարող է Քարտապանին ընձեռել հավելյալ Միավորներ վաստակելու հնարավորություն՝ ներկայացնելով հնարավորությունից օգտվելու ժամկետն ու պայմանները տարբեր տեղեկատվական միջոցներով:

13.4.6. Միավորները հասանելի են Քարտապանին Քարտի գործողության ողջ ժամկետի ընթացքում:

Քարտի գործողության ժամկետը լրանալու կամ Քարտը փակելու դեպքում Միավորները պահպանվում են, և կարող են օգտագործվել Քարտի փակման կամ Քարտի ժամկետը լրանալու օրվանից 6 (վեց) ամիսների ընթացքում: Կուտակված և չսպառված Միավորները զրոյացվում են 6 ամիսը լրանալուց հետո և ենթակա չեն վերականգնման:

13.4.7. Քարտապանը կարող է իր կուտակած Միավորների մասին տեղեկատվություն ստանալ, ինչպես նաև օգտագործել Միավորները՝ զանգահարելով Բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն **(+374 10) 31 99 99** հեռախոսահամարով:

13.4.8. Կուտակված Միավորները չեն կարող օգտագործվել գումարի կանխիկացման կամ Բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների մարման նպատակով:

13.4.9. Բանկն իրավունք ունի ցանկացած ժամանակ ձևափոխել Ծրագիրը կամ ստեղծել Ծրագրի նոր տարբերակ՝ պահպանելով Քարտապանի կուտակած Միավորները:

13.4.10. Բանկն իրավունք ունի կասեցնել ժամկետանց պարտավորություն և/կամ Քարտի սպասարկման միջնորդավճարի պարտավորություն ունեցող Քարտապանների Միավորների հաշվարկը և/կամ ամբողջությամբ կամ մասնակիորեն սահմանափակել նշված Քարտապանի կողմից վաստակած միավորների օգտագործման հնարավորությունը, իսկ նշված պարտավորությունները 6 (վեց) ամսվա ընթացքում

Քարտապանի կողմից չմարելու դեպքում դադարեցնել Քարտապանի անդամակցումը Ծրագրին՝ չեղյալ համարելով Քարտապանի կուտակած Միավորները:

13.4.11. Բանկն իրավունք ունի զեղծարարության կամ զեղծարար գործարքի կասկածի դեպքում չեղարկել Քարտապանի՝ Միավորներից օգտվելու հնարավորությունը: Զեղծարարության չափանիշները սահմանվում են Բանկի կողմից:

13.4.12. Ծրագրի շրջանակում Միավորների հաշվարկման հիմք է հանդիսանում գործարքի ձևակերպման օրը, ընդ որում՝ թե գործարքը և թե կուտակած Միավորները կարող են արտացոլվել Քարտապանի Հաշվի քաղվածքում միայն ձևակերպումից հետո՝ արտացոլելով նաև ձևակերպման ամսաթիվը:

13.4.13. ԱՄՆ դոլար և եվրո արժույթներով Քարտերի համար Միավորների հաշվարկման հիմք է հանդիսանում գործարքի ձևակերպման օրվա դրությամբ Բանկի կողմից տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեքը:

13.4.14. Այն դեպքում, երբ Քարտապանն ունի մեկից ավելի American Express Gold/American Express Gold Debit/American Express Blue Քարտեր, նա ցանկացած ժամանակ իրավունք ունի իրականացնել կուտակած Միավորների տեղափոխում իր նույն տեսակի Քարտերի միջև՝ զանգահարելով Բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն կամ լրացնելով համապատասխան դիմում Բանկի մասնաճյուղում:

13.4.15. Ծրագրին մասնակցությունը ենթադրում է լիարժեք համաձայնություն բոլոր պայմանների հետ:

13.4.16. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտապանին առաջարկվող ապրանքների և ծառայությունների տեսականու մեջ ներառված ապրանքը և/կամ ծառայությունը առևտրի և սպասարկման կետում սպառվելու կամ այլ հիմքով տվյալ պահին անհասանելի լինելու համար: Նման իրավիճակում Քարտապանին առաջարկվում է ընտրություն կատարել այլ ապրանքների և ծառայությունների տեսականուց:

13.5. «Ճանապարհային օժանդակություն» ծառայության կանոնները

13.5.1. «Ճանապարհային օժանդակություն» ծառայությունը (այսուհետ սույն ենթաբաժնում՝ Ծառայություն) նախատեսում է American Express Gold, American Express Gold Debit և American Express Blue Քարտերի Քարտապանների պատվերով խափանված մարդատար ավտոմեքենայի (քաշը չպետք է գերազանցի 3 տոննան) տարհանման ծառայության անվճար մատուցում:

13.5.2. American Express Blue քարտերի դեպքում Ծառայությունը Քարտապանին մատուցվում է Երևան քաղաքի տարածքում, իսկ American Express Gold և American Express Gold Debit Քարտերի դեպքում՝ Հայաստանի ողջ տարածքում 150 կմ շառավղով:

13.5.3. Ծառայությունը Քարտապանին հասանելի է շուրջօրյա և իրականացվում է բացառապես վերջինիս կողմից **(+374 10) 31 99 99** հեռախոսահամարով Բանկ զանգահարելու միջոցով կատարված պատվերի հիման վրա:

13.5.4. Ծառայությունը Քարտապանին անվճար մատուցվում է տարին առավելագույնը 2 (երկու) անգամ, սույն պայմանների **13.5.5.** կետում սահմանված դրույթների ապահովման պայմանով: Ընդ որում, տարեկան 2 (երկու) անգամ Ծառայության մատուցումը ներառում է ինչպես հիմնական, այնպես էլ կից Քարտերի Քարտապանների համար մատուցված ծառայությունների հանրագումարը: Տարվա հաշվարկը կատարվում է Քարտը ձեռք բերելու օրվանից 1 (մեկ) օրացուցային տարի հիմքով և շարունակվում նույն սկզբունքով:

13.5.5. Ծառայությունից անվճար օգտվելու համար սահմանված են հետևյալ պայմանները.

ա) Քարտապանը պետք է ապահովի իր ներկայությունը տարհանման ենթակա ավտոմեքենայի գտնվելու վայրում և իր American Express Blue քարտի կամ American Express Gold կամ American Express Gold Debit Քարտի կամ անձը հաստատող փաստաթղթի առկայությունն իր մոտ Ծառայության մատուցման պահին: Տարհանվող տրանսպորտային միջոցը պետք է ունենա հիմնական հայկական հաշվառման համարանիշ, որը կհամապատասխանի տվյալ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրում նշված հաշվառման համարանիշին: Վերջինս նախապես հաստատվում է Քարտապանի կողմից պատվեր կատարելիս, այնուհետև ստուգվում նշված հասցեով ավտոմեքենայի տարհանման նպատակով ուղարկված քարշակ մեքենայի ժամանումից հետո՝ քարշակ ծառայություն իրականացնող գործընկեր կազմակերպության վարորդի կողմից Բանկ զանգահարելու և Բանկի կողմից Քարտապանի ինքնությունը հաստատելու միջոցով,

բ) Քարտապանը պետք է լրացնի և ստորագրի քարշակ ծառայությունը մատուցող գործընկեր կազմակերպության աշխատակցի կողմից ներկայացված Ծառայության մատուցման ստացականը: Ծառայության անվճար մատուցումը չի տարածվում նոր գնված ավտոմեքենաների՝ մաքսատան տարածքից տարհանման դեպքերի վրա:

13.5.6. Պայմանների **13.5.4.** կետում սահմանված պատվերների քանակը գերազանցելու, ինչպես նաև **13.5.2.** կետում նշված սահմաններից դուրս Ծառայության պատվերների դեպքերում Քարտապանն իրավունք ունի օգտվել Ծառայությունից՝ Ծառայությունը մատուցած ընկերությանը Ծառայության արժեքն իր կողմից վճարելու և դրա մասին պատվերի իրականացման պահին իր ցանկությունը Բանկին նախապես հայտնելու պայմանով:

13.5.7. Ծառայության արժեքը Քարտապանի կողմից վճարելու պայմանով Ծառայությունից օգտվելու սակագները սահմանվում են Բանկի կողմից և հրապարակվում **www.americanexpress.am** կայքերում:

13.5.8. Բանկն իրավունք ունի չմատուցել Ծառայությունը Քարտապանին, կասեցնել Ծառայության հետագա մատուցումը կամ դադարեցնել American Express Blue քարտի կամ American Express Gold քարտի և Քարտապանի հետ կնքված American Express Blue կամ American Express Gold վարկային Քարտով տրամադրվող վարկային գծի պայմանագրի գործողությունը և պահանջել Քարտապանից վերադարձնել Քարտը Բանկին հետևյալ դեպքերում՝

ա) եթե առկա է Քարտապանի կողմից Ծառայությունից անվճար օգտվելու համար սահմանված պայմանների միտումնավոր խախտման կասկած կամ Բանկին հայտնի դարձած հանգամանք,

բ) եթե առկա է Բանկին խեղաթյուրված, կեղծ տեղեկատվության տրամադրմամբ պատվերների կասկած կամ Բանկին հայտնի դարձած հանգամանք,

գ) եթե առկա է Ծառայությունից անվճար օգտվելու սեփական հնարավորություններն այլ անձանց օգտին որևէ այլ շահ հետապնդելու նպատակով կամ անշահախնդիր օգտագործելու կասկած կամ Բանկին հայտնի դարձած հանգամանք:

13.6. Priority Pass քարտի տրամադրման և սպասարկման կանոնները

13.6.1. Priority Pass քարտը Հիմնական և Կից American Express Gold և American Express Gold Debit Քարտերի հետ տրամադրվող քարտ է, որը հնարավորություն է տալիս Հիմնական և Կից Քարտապաններին տարեկան առավելագույնը 2 անգամ անվճար մուտք գործել օդանավակայանների Priority Pass սպասարահներ, ընդ որում՝ Քարտապանները հնարավորություն ունեն իրենց 2 (երկու) անվճար մուտքերն օգտագործելու ինչպես միայն իրենց համար, այնպես էլ 2 (երկու) անվճար մուտքերից մեկն իրենց համար, մյուսը՝ իրենց հետ ճամփորդող մեկ հյուրի համար: Priority Pass քարտի մասին տեղեկատվությունը հրապարակվում է **www.acba.am** և **www.americanexpress.am** կայքերում:

13.6.2. Priority Pass համակարգի ցանցում ներառված օդանավակայանների սպասասրահների ցանկին և վերջիններիս կողմից առաջարկվող ծառայություններին Քարտապանները կարող են ծանոթանալ այցելելով Priority Pass համակարգի պաշտոնական կայքէջ՝ **www.prioritypass.com**:

13.6.3. Priority Pass քարտը Քարտապաններին տրամադրվում է 4 տարի ժամկետով, սակայն ոչ ավելի, քան Հիմնական քարտի գործողության ժամկետն է:

13.6.4. Priority Pass քարտի գործողության ժամկետի ավարտին քարտը ավտոմատ կերպով վերաթողարկվում է:

13.6.5. Priority Pass քարտի սակագները սահմանվում են համաձայն Բանկում գործող Սակագների:

13.6.6. Քարտապանների, ինչպես նաև նրանց հյուրերի այցելությունների համար սահմանված մուտքի գումարը գանձվում է Priority Pass քարտին կցված Հիմնական American Express Gold կամ American Express Gold Debit Քարտի Հաշվից՝ սպասասրահ մուտք գործելու օրվանից հետո մի քանի օրերի ընթացքում:

13.6.7. Priority Pass ընկերության կողմից Քարտապանի կողմից ծառայությունից օգտվելու համար սահմանված սակագների գանձումների անհնարինության դեպքում Priority Pass քարտը կարող է արգելափակվել՝ մինչև գանձման համար անհրաժեշտ գումարի ապահովումը Քարտին:

13.6.8. Priority Pass քարտով կատարված այցելությունների համար չվճարված գումարները հանդիսանում են պարտավորություն և ենթակա են վճարման Քարտապանի կողմից:

13.6.9. Քարտապանները հնարավորություն ունեն օգտվել նաև Priority Pass քարտի էլեկտրոնային տարբերակից բջջային հավելվածի միջոցով, որն ամբողջությամբ փոխարինում է Priority Pass քարտին: Բջջային հավելվածը հասանելի է դառնում քարտը պատվիրելուց հետո:

13.6.10. Priority Pass բջջային տարբերակի օգտագործման համար անհրաժեշտ է հեռախոսի մեջ ներբեռնել Priority Pass հավելվածը, մուտքագրել Բանկի կողմից Քարտապաններին տրամադրվող մուտքանունը և գաղտնաբառը, այնուհետև հավելվածի մեջ արտացոլվող QR կոդով մոտենալ Priority Pass համակարգի ցանցում ներառված օդանավակայանների սպասասրահներ:

13.6.11. Քարտապանի American Express Gold կամ American Express Gold Debit Քարտի փակման դեպքում, եթե Քարտապանը ունի գործող այլ American Express Gold կամ American Express Gold Debit Քարտ, ապա Priority Pass քարտը կցվում է այդ գործող քարտին, իսկ վերջինիս բացակայության դեպքում Priority Pass քարտը ենթակա է փակման:

13.6.12. Քարտապանը կարող է ցանկացած ժամանակ փակել իր Priority Pass քարտը՝ այդ մասին տեղեկացնելով Բանկին:

13.7. Fast Track (Արագընթաց ուղի) ծառայության տրամադրման և սպասարկման կանոնները

13.7.1. Fast Track (Արագընթաց ուղի) ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) նախատեսված է American Express Gold և American Express Gold Debit Քարտերի Քարտապանների համար «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում անձնագրային հսկողության և ավիացիոն անվտանգության զննման գոտու տարածքում արագընթաց ուղիներից օգտվելու նպատակով,

13.7.2. 1 (մեկ) օրացուցային տարվա ընթացքում American Express Gold և American Express Gold Debit Քարտերի Հիմնական և Կից Քարտապաններին Ծառայությունը մատուցվում է անվճար՝ յուրաքանչյուրին առավելագույնը 2 (երկու) անգամ, ընդ որում՝ Հիմնական և Կից Քարտատապանները կարող են Ծառայությունից օգտվելու 2 (երկու) անվճար հնարավորություններն օգտագործել ինչպես միայն իրենց համար, այնպես էլ 2 (երկու) անվճար հնարավորություններից մեկն իրենց համար, մյուսը՝ իրենց հետ ճամփորդող մեկ հյուրի համար,

13.7.3. Ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է acba digital բջջային հավելվածի Քարտեր բաժնում ստեղծել համապատասխան QR կոդ: Ընդ որում՝ կից Քարտապանների՝ Ծառայությունից օգտվելու համար QR կոդի ստեղծման հնարավորությունը հասանելի է միայն հիմնական Քարտապանների acba digital բջջային հավելվածում,

13.7.4. Ստեղծված QR կոդերը acba digital հավելվածում հասանելի են օգտագործման համար ցանկացած ժամանակ՝ ստեղծումից հետո 1 (մեկ) օրացուցային տարվա ընթացքում: Ստեղծված յուրաքանչյուր QR կոդ հնարավոր է օգտագործել միայն մեկ անգամ: Ընդ որում, QR կոդերը օգտագործելուց հետո դրանք ևս շարունակում են ցուցադրվել acba digital բջջային հավելվածում մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը: Տվյալ օրացուցային տարում ստեղծված և օգտագործված կամ չօգտագործված QR կոդերը acba digital բջջային հավելվածում արտացոլվում են մինչև տվյալ օրացուցային տարվա վերջին օրացուցային օրը, որից հետո դրանք այլևս չեն արտացոլվում acba digital բջջային հավելվածում,

13.7.5. Ծառայության պայմանները ներկայացված են Զվարթնոց միջազգային օդանավակայանի պաշտոնական կայքէջում՝ **www.zvartnots.aero**:

14. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

14.1. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխություններ և լրացումներ կատարել Սակագներում և Պայմաններում՝ փոփոխությունների և լրացումների ուժի մեջ մտնելուց 15 օր առաջ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվության ստացման համար Քարտապանի կողմից ընտրված եղանակով ծանուցելով վերջինիս:

14.2. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ Պայմանագրով սահմանված կարգով Քարտապանին ծանուցելով: Քարտային հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, Բանկը դրանք փոխանցում է Բանկի համապատասխան հաշվապահական հաշվին Քարտապանի կողմից այդ դրամական միջոցների ստացման նպատակով:

14.3. Բանկն իրավունք ունի Քարտապանի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրել Նախարարությանը, Հիմնադրամին, ինչպես նաև Որոշման և/կամ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի և/կամ Բանկի և Նախարարության միջև կնքված Սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի և/կամ Բանկի և Հիմնադրամի միջև կնքված պայմանագրի կատարման շրջանակներում այլ իրավասու անձանց:

14.4. Սոցիալական ապահովության հաշվի և ARCA կենսաթոշակային քարտի թողարկման և սպասարկման պայմանագրի կնքման դեպքում՝ Պայմանագրի դրույթների և Որոշման միջև հակասությունների դեպքում գործում են Որոշման դրույթները, իսկ հատուկ բանկային հաշվի և ARCA հատուկ քարտի թողարկման և սպասարկման պայմանագրի կնքման դեպքում՝ Պայմանագրի դրույթների և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի միջև հակասությունների դեպքում գործում են օրենքի դրույթները:

14.5. Քարտապանն իրավունք ունի Պայմանագրից բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

14.6. Քարտապանը պարտավորվում է Քարտի ստացման դիմումում/դիմում-պայմանագրում ներկայացված տվյալ-ների (անձնագրային տվյալներ, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե և այլն), ինչպես նաև վարկային գծի (առկայության դեպքում) ստացման համար ներկայացված փաստաթղթերում և նշված տեղեկատվության փոփոխության դեպքում 3 (երեք) օրացուցային օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին գրավոր կամ

(+374 10) 31 88 88 կամ **(+374 10) 31 88 99** հեռախոսահամարներով Բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն զանգահարելու միջոցով:

14.7. Պայմանագրի ստորագրմամբ Բանկի կողմից Քարտապանին տրամադրվում է անձնական տվյալների մշակման վերաբերյալ ծանուցում՝ Պայմանների Հավելված 2-ում նշված բովանդակությամբ, և Քարտապանը համաձայնում է այդ պայմաններով անձնական տվյալների մշակմանը:

14.8. Պայմաններին կից հավելվածները համարվում են դրա անբաժանելի մասը և կիրառվում են կողմերի միջև ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

15. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ

15.1. Քարտապանը, ստորագրելով վճարային քարտի դիմում-պայմանագիրը կամ ակտիվացնելով քարտը, ծանուցվում և տալիս է իր համաձայնությունը, որ՝

- Բանկի կողմից իրեն ուղարկվեն ծանուցումներ՝ Բանկի կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված ցանկացած տեղեկատվության վերաբերյալ:
- Քարտը ստանա Բանկի հետ համագործակցող սուրհանդակային ծառայության միջոցով՝ ստորագրելով «Սուրհանդակային ծառայության միջոցով քարտի ստացական» փաստաթուղթը: Տեղյակ է, որ Քարտն առաքվելու է սուրհանդակի կողմից իր հետ նախապես ճշտված հասցեով և Քարտը տրամադրվելու է անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում: Համաձայն է, որ վերջինիս բացակայության կամ նշված ժամին ու նշված հասցեում իր բացակայության դեպքում՝ Քարտը չի տրամադրվելու, սակայն ծառայությունը համարվելու է մատուցված և գանձվելու է Բանկի սակագներով սահմանված ծառայության միջնորդավճարը:
- Իր լրացուցիչ քարտի համար սահմանվեն իր հիմնական քարտի էլեկտրոնային հասցեն և գործարքների սահմանաչափերը:

15.2. Քարտապանը հավաստիացնում է, որ՝

- իր մասնակցությամբ մինչ Պայմանագրի կնքումը հարուցված կամ ավարտված քրեական, քաղաքացիական, աշխատանքային կամ վարչական գործեր չկան, որոնք էականորեն սպառնում են Քարտապանի ակտիվներին, գործարքների վավերությանը կամ դրանցից բխող պարտավորությունների կատարմանը,
- ունի անհրաժեշտ իրավունակություն և գործունակություն Պայմանագիրը և դրա հավելվածները կնքելու համար,
- չունի չկատարված պարտավորություններ, որոնց չկատարման համար ճանաչվել է սնանկ, իրեն սնանկ ճանաչելու կամ սնանկության վտանգի հայցով դատարան դիմում չի ներկայացվել,
- իր գույքի (ակտիվների) նկատմամբ որևէ սահմանափակումներ առկա չեն և չեն կանխատեսվում,
- մինչև Պայմանագրի կնքումը և/կամ կատարումը իր կողմից կնքված այլ պայմանագրերի շրջանակում որևէ համաձայնության ստացման կամ ծանուցումների ներկայացման անհրաժեշտություն չկա,
- իր կնքած պայմանագրերը չեն նախատեսում պարտավորությունների կատարման ստորադասում,
- Պայմանագրի գործողության ընթացքում կգործի ՀՀ օրենսդրության (այդ թվում՝ հարկային, առողջապահական, անվտանգության, աշխատանքային և էկոլոգիական ոլորտների) համաձայն,

- իրավասու է զբաղվել այնպիսի գործունեությամբ, որով զբաղվում է,
- Պայմանագիրը կնքելիս չի գտնվում մոլորության, խաբեության, բռնության, սպառնալիքի, չարամիտ համաձայնության կամ դժվար կացության մեջ, լիովին հասկանում է իր գործողությունների նշանակությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ և ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ԱՎԱՆԴԱՏՈՒ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Խնդրում ենք մինչև վճարային քարտի դիմում-պայմանագիրը ստորագրելը կամ մինչև Քարտի համար դիմելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին:
Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետ սույն հավելվածում՝ Հիմնադրամ):
Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6,
Հեռախոսը՝ +374 10 58 35 14,
Ինտերնետային կայքը՝ www.adgf.am,
Սույն ծանուցման մեջ կիրառվող սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանումներին:

Հատուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

1. եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ
2. եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ արտարժութային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի

միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժութային կառուցվածքը	**Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ**	**Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ**	**Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ**	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	**Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է**
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	**16 միլիոն ՀՀ դրամ**	**7 միլիոն ՀՀ դրամ**	**մինչև 16 միլիոն ՀՀ դրամ** (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	**7 միլիոն ՀՀ դրամ** (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,

դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,

ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,

զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Ձեր բանկային ավանդը ներդրման պահին հանդիսանում է Օրենքով սահմանված չափով և կարգով՝

երաշխավորված ավանդ	o	*(այն համատեղ ավանդների դեպքում, որոնց համատեղ ավանդատուներից մեկի կամ մի քանիսի բանկային ավանդները երաշխավորված ավանդ չեն համարվում նշել ավանդի ընդհանուր գումարի մեջ երաշխավորված մասը՝ տոկոսային արտահայտությամբ)*
չերաշխավորված ավանդ	o	

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը և ժամկետը.
«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «ԱԿԲԱ ԽՈՒՄԲ» ֆինանսական խմբի (այսուհետ՝ Խումբ)[1] անդամները (ՀՀ, ք. Երևան, Արամի 82-84) Քարտապանի (ներառյալ՝ կից Քարտապանի) հետ գործարար հարաբերությունների (գործարքների) ողջ ընթացքում, ինչպես նաև դրանից հետո, եթե ՀՀ օրենսդրությամբ և/կամ Խմբի անդամների ստանձնած/Խմբի անդամների նկատմամբ կիրառելի այլ կարգավորումներով սահմանված է անձնական տվյալների մշակման պահանջ, կամ Խմբի անդամների մարքեթինգային նպատակներով կարող են ստանալ Քարտապանի վերաբերյալ անձնական տվյալները և դրանք ներառել Խմբի անդամների համապատասխան տեղեկատվական բազաներում: Տվյալները կարող են տրամադրվել Քարտապանի կողմից կամ ստացվել ստորև նշված անձանցից՝ վերջիններիս հարցում իրականացնելու միջոցով:

[1] ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 28/04/2017թ.-ի թիվ 27 ԾՕՀ Ա որոշմամբ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն (հասցե՝ ք.Երևան, Արամի փողոց, 82-84), «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն (հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան փողոց, 10) և «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն (հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան փողոց, 10) (այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Խմբի անդամներ) որակվել (ճանաչվել) են բոլորը միասին որպես ֆինանսական խումբ՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԽՈՒՄԲ» անվանմամբ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 14/08/2020թ.-ի որոշմամբ ֆինանսական խումբը վերանվանվել է «ԱԿԲԱ ԽՈՒՄԲ» ֆինանսական խումբ:

Մշակվող անձնական տվյալների ցանկը.

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ից (ԷԿԵՆԳ) ստացվող տվյալներն են.

ՏՐԱՄԱԴՐՈՂ ՄԱՐՄԻՆ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿ
ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ	‣ Անձը հաստատող փաստաթղթ(եր)ի տեսակ և տվյալներ (գործող և ոչ վավեր), կարգավիճակ, դրանցում առկա անձնական տվյալներ, ներառյալ՝ լուսանկար, անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, սեռ, քաղաքացիություն, հաշվառման հասցե, կարգավիճակ՝ կենդանի/մահացած, ‣ ՀԾՀ/հրաժարման տեղեկանք(ներ)ի տվյալներ (գործող և ոչ վավեր), կարգավիճակ,

ՏՐԱՄԱԴՐՈՂ ՄԱՐՄԻՆ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿ
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ	‣ Ամուսնության/ամուսնալուծության գրանցման տվյալներ, դրանում առկա ամուսնու/կնոջ տվյալներ, ներառյալ՝ անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, սեռ, քաղաքացիություն, կարգավիճակ՝ կենդանի/մահացած, հասցե, անձը հաստատող փաստաթղթ(եր)ի տվյալներ (գործող և ոչ վավեր), ՀԾՀ/հրաժարման տեղեկանք(ներ)ի տվյալներ (գործող և ոչ վավեր), ‣ Երեխայի տվյալներ, ներառյալ՝ անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, սեռ, քաղաքացիություն, կարգավիճակ՝ կենդանի/մահացած, հասցե, անձը հաստատող փաստաթղթ(եր)ի տվյալներ (գործող և ոչ վավեր), ՀԾՀ/հրաժարման տեղեկանք(ներ)ի տվյալներ (գործող և ոչ վավեր),
ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	‣ Տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի, ‣ Տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի վկայականի, ‣ Տրանսպորտային միջոցի օտարման սահմանափակումների տեղեկանքի, ‣ Գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքների վկայականի տվյալներ

ՏՐԱՄԱԴՐՈՂ ՄԱՐՄԻՆ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿ
ՀՀ ԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ	ՀՀ ԱՆ ԻԱ պետական ռեգիստրի քաղվածքի տվյալներ, ներառյալ՝ իրավաբանական անձանց › Ստեղծման, › Վերակազմակերպման, › Լուծարման պետական գրանցման, › Առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման տվյալներ
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	› Անձնական տվյալներ, կազմակերպության տվյալներ, ցանկացած տեսակի սահմանափակումներ, դրանց ամբողջական պատմություն, ներառյալ՝ արգելանքի վերաբերյալ դատարանի որոշման, և կատարողական թերթի վերաբերյալ տվյալներ

ՏՐԱՄԱԴՐՈՂ ՄԱՐՄԻՆ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿ
ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ	› Գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տվյալներ (նշված տվյալները մշակվում են անշարժ գույքի գրավի դեպքում)

«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամից ստացվող տվյալներն են.

ՏՎՅԱԼՆԵՐԻ ԽՈՒՄԲ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿ
ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ	Ներառյալ՝ անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, սեռ, անձը հաստատող փաստաթղթի տեսակ և տվյալներ, ՀԾՀ, հաշվառման հասցե

ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՏՎՅԱԼՆԵՐ	Ներառյալ՝ կազմակերպության անվանում, ՀՎՀՀ, աշխատանքային պայմանագրի սկիզբ և վերջ, հաստիք, աշխատավարձի չափ, ԱՎՈՒՄ (Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ), հեռախոսահամար, հաշվառման հասցե
ԱՇԽԱՏԱՎԱՅՐ(ԵՐ)Ի ՆԱԽՈՐԴ ՏՎՅԱԼՆԵՐ	Ներառյալ՝ կազմակերպության անվանում, ՀՎՀՀ, աշխատանքային պայմանագրի սկիզբ և վերջ, հաստիք, աշխատավարձի չափ, ԱՎՈՒՄ (Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ), հեռախոսահամար, հաշվառման հասցե

Անձնական տվյալների մշակումը.

Վերը նշված տվյալները կարող են օգտագործվել, ուսումնասիրվել և վերլուծվել Քարտապանի ներգրավմամբ ցանկացած բիզնես գործընթացում հետևյալ նպատակներով՝ անձնական տվյալների վերաբերյալ ստույգ տվյալների ստացում, առավել պատշաճ նույնականացում և տվյալների բազայի ուղղումների իրականացում, սպասարկման ժամանակատարության կրճատում, տեխնիկական սխալների բացառում, գրավադրվող գույքերի վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության ստացում: Վերը նշված տվյալները, ինչպես նաև Քարտապանի վերաբերյալ

բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները կարող են փոխանցվել «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեֆորթինգ» ՓԲԸ-ին, ՀՀ կենտրոնական բանկին, իրավասու պետական մարմիններին, Քարտապանին դրամական փոխանցումներ կատարող անձանց, այն անձանց, որոնց կանոնադրական կապիտալում Խմբի անդամներն ունեն ուղղակի կամ անուղղակի մասնակցություն և/կամ այն անձանց, որոնք Խմբի անդամների կանոնադրական կապիտալում ունեն ուղղակի կամ անուղղակի մասնակցություն, ինչպես նաև այն անձանց, որոնց հետ Խմբի անդամներն իրենց կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված կնքել են համագործակցության/ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Համաձայնության/անձնական տվյալների հետկանչը.

Համաձայնությունը/անձնական տվյալները կարող են հետ կանչվել, ուղղվել, ոչնչացվել, իսկ տվյալների մշակումը՝ դադարեցվել ցանկացած ժամանակ Քարտապանի, իսկ տվյալների այլ սուբյեկտների՝ Քարտապանի սպասարկման նպատակով տրամադրված տվյալների դեպքում՝ այդ անձանց գրավոր դիմումի հիման վրա:

Հաստատված ստորագրությամբ կամ էլեկտրոնային եղանակով՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ հետ կանչվելու դեպքում Բանկը պարտավոր է դադարեցնել անձնական տվյալներ մշակելը և ոչնչացնել տվյալները հետկանչն ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում, եթե տվյալ պահին Քարտապանը չի օգտվում, ինչպես նաև ներգրավված չէ Խմբի անդամների կողմից մատուցվող որևէ ծառայության գծով գործող գործարար հարաբերությունում (գործարքում), ինչի համար համաձայնությունը և/կամ անձնական և այլ տվյալների մշակումն անհրաժեշտ է, և եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ և Խմբի անդամների ստանձնած/Խմբի անդամների նկատմամբ կիրառելի այլ կարգավորումներով: Մարքեթինգային նպատակներով հարցումների համաձայնությունը կարող է ցանկացած դեպքում հետ կանչվել էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումի հիման վրա:

Համաձայնության հետկանչի դեպքում Խմբի անդամներն իրավունք ունեն դադարեցնել Քարտապանի հետ գործարքը/գործարար հարաբերությունները:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
82-84, Արամի փողոց 0002, Երևան, ՀՀ
www.acba.am | 010 31 88 88
Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից